

ԱՒԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ  
ԿԱՐԳ ԽԱՒԱՐՄԱՆ ԳԻՇԵՐԻ

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻԻՆ

MAUNDY THURSDAY  
TENEBRAE

NIGHT HOURS

Ժամերգութեան սկսելէ առաջ բեմին կեդրոնը կը դրուին 12 մոմեր աշտանակներու վրայ՝ 12 առաքեալները խորհրդանշող, որոնցմէ մէկը՝ Յուդան, սեւ կը ներկուի: 12 աշտանակներուն կեդրոնը կը դրուի աւելի մեծ մոմ մը՝ Յիսուսը խորհրդանշող: Մոմերը պէտք չէ վառած ըլլան:

*Before the service 12 candles are put on the candle-holders, on the bema, which represent the 12 apostles. One of them, Judas, is painted black. In the center a bigger candle is put, which represents Jesus. The candles should not be lit.*

ՔՀՆ. *Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս: Ամէն:*

PRS. Blessed be our Lord Jesus Christ. Amen.

*Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո: Եկեացէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի: ԶՏաց մեր հանապազորդ սուր մեզ այսօր: Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէ: Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք, յաւիտեանս: Ամէն:*

Our Father, who art in heaven, hallowed be Thy name. Thy kingdom come. Thy will be done on earth as it is in heaven. Give us this day our daily bread. And forgive us our trespasses, as we forgive those who trespass against us. And lead us not into temptation, but deliver us from evil. For Thine is the kingdom and the power and the glory, forever. Amen.

ՔՀՆ. *Տէր եթէ զըթոռնս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո:*

PRS. Lord, open my lips, and my mouth will declare your praise.

ՍՐԿ. *Օրհնեալ է Աստուած:*

DCN. Blessed be God.

ՔՀՆ. *Տէր, եթէ զըթոռնս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո:*

PRS. Lord, open my lips, and my mouth will declare your praise.

ՍՐԿ. *Գովեալ է Աստուած:*

DCN. Praised be God!

ՔՀՆ. *Օրհնեալ համագոյ եւ միասնական անբաժանելի Սուրբ Երրորդութիւնն՝ Հայր եւ Որդի եւ Հոգի Սուրբ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:*

PRS. Blessed be the co-existing, united and inseparable Holy Trinity, the Father and the Son and the Holy Spirit, now and always and forever and ever. Amen.

ՍԱՂՄՈՍ 3

PSALM 3

*– Տէր, զի բազում եղեն նեղիչք իմ, եւ բազումք յարեան ի վերայ իմ: Բազումք ասէին զանձնէ իմմէ, թէ չիք փրկութիւն սորա առ Աստուած իւր:*

O Lord, how many are my foes! Many are rising against me; many are saying to me, “There is no help for you in God.”

*– Այլ դու, Տէր, օգնական իմ ես, փառք իմ եւ բարձրացուցիչ գլխոյ իմոյ: Զայնիւ իմով ես առ Տէր կարողացի, եւ լուաւ ինձ ի լեռնէ սրբոյ իւրմէ:*

But you, O Lord, are a shield around me, my glory, and the one who lifts up my head. I cry aloud to the Lord, and he answers me from his holy hill.

– Ես ննջեցի եւ ի քուն եղէ, զարթեայ եւ Տէր ընդունելի իմ է: Ոչ երկեայց ես ի բերաւոր զօրաց նոցա, ոչք շուրջանակի պատեալ պաշարեալ պահէին զիս:

– Արի, Տէր, եւ փրկեա զիս, Աստուած իմ, զի դու հարեր զամենեսեան ոչք էին ընդ իս թշնամութեամբ ի տարապարտուց, եւ զատամունս մեղաւորաց փշրեսցես: Տեառնդ է փրկութիւն, ի վերայ ժողովրդեան քո օրհնութիւն քո:

– Ողորմութեամբ քով սատակեա ըզթըշնամիս իմ, եւ կորո զամենայն նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ:

– Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սըրբոյ: Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

– Յիշեսցուք ի գիշերի զանուն քո, Տէր:

– Բողոքեսցեն սիրտք մեր զբան բարի, եւ լեզուք մեր պատմեսցեն զգործս երկնաւոր թագաւորիդ:

– Ի մէջ գիշերի յարուցեալ խոստովանեսցուք ըզքեզ, Տէր:

– Զաղօթս մեր տացուք քեզ, Տէր, ի գաւիթըս քո ի մէջ նոր Երուսաղէմի:

– Ի գիշերի համբարձցուք ըզձեռըս մեր սրբութեամբ առ քեզ, Տէր:

– Ի ձայն գոհութեան, ամենայն Հոգիք, օրհնեցէք ըզՏէր:

– Զարթիք փառք իմ, զարթիք, եւ ես զարթեայց առաւօտուց, ալէլուիա:

– Զարթիք ընդ զըլարթունս, մանկունք վերինըն սիոնի, ալէլուիա:

– Զարթիք որդիք լուսոյ, ի յօրհնութիւն Հօրըն լուսոյ, ալէլուիա:

– Զարթիք փրկեալք արեամբ, եւ տուք ըզփառըս փրկողին, ալէլուիա:

– Զարթիք նոր ժողովուրդք, նոր երգս առեալ նորոգողին, ալէլուիա:

– Զարթիք հարսունք Հոգւով, սպասեալք գալոյ սուրբ փեսային, ալէլուիա:

– Զարթիք վառեալք լուսով ըստ իմաստուն սուրբ կուսանացն, ալէլուիա:

I lie down and sleep; I wake again, for the Lord sustains me. I am not afraid of ten thousands of people who have set themselves against me all around.

Rise up, O Lord! Deliver me, O my God! For you strike all my enemies on the cheek; you break the teeth of the wicked. Deliverance belongs to the Lord; may your blessing be on your people!

In your steadfast love cut off my enemies, and destroy all my adversaries, for I am your servant.

Glory be to the Father and to the Son and to the Holy Spirit. Now and always and forever and ever. Amen.

We remember your name in the night, O Lord.

Our hearts overflow with good words and our tongues declare your works, O heavenly King.

We rise in the middle of the night and we give thanks to you, O Lord.

We present our prayers to you, O Lord, in your court, in the new Jerusalem.

In the night, we lift up our hands to you in holiness, O Lord.

With songs of thanksgiving, let everything that has breath, praise the Lord.

Awake, O my glory, awake; and I will awake at dawn. Alleluia!

Awake, with the angels, O children of the Zion above. Alleluia!

Awake, O children of light, to bless the Father of light. Alleluia!

Awake, O saved ones by the blood, and give glory to the Savior. Alleluia!

Awake, new people, and sing a new song to the one who renews all things! Alleluia!

Awake, brides in the spirit, you who await for the coming of the holy Bridegroom! Alleluia!

Awake, with lighted lamp like the wise and holy virgins! Alleluia!

– Զարթիք պատրաստեցէք իւր լապտերաց զջերմ արտասուս, ալէլուիա:

– Զարթիք եւ մի՛ նընջէք, նըման յիմար կուսից նիրհէք, ալէլուիա:

– Զարթիք երկիրպագցուք եւ արտասուօք զայս ասասցուք, ալէլուիա:

– Զարթիր ընդէ՞ր նընջես, Տէր, մի՛ մերժեր ըզմեզ ի սպառ:

– Արի, Տէր, օգնեա մեզ, տացուք անուանըզ քում ըզփառս:

– Այժմ եւ յաւէտ, Հօր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն: Ամէն:

– Զարթուցեալքս ի գբաղմանէ գիշերային հանգըստենէ:

– Շնորհեսցէ մեզ մարդասէր Տէր մըխիթարութիւն եւ ի սփոփանս եկեղեցւոյ:

– Ահիւ եւ դողութեամբ կացցուք ի յաղօթս:

– Եկեալ խոստովանեսցուք ըզյանցանս:

– Եւ գըտցուք ի Քրիստոսէ ըզքաւութիւն եւ ըզմեծ զողորմութիւն:

– Յաւիտեանս յաւիտենից: Ամէն: Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

– Ամէն: Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

ՔԱՐՈՁ

ՍՐԿ. Զարթուցեալքս ամենեքեան ի հանգըստենէ՛ քընո՛յ, զոր շնորհեաց մեզ մարդասէրն Աստուած ի մըխիթարութիւն եւ ի սփոփանքս տըկարութեան մերո՛ւմ: Եւ եկեալքըս միաբան հոգեւոր երգով ի փառաբանութիւն եւ ի պատիւ ամենասուրբ անուան Տեառն մերոյ եւ փըրկչին Յիսուսի Քրիստոսի: Ա՛հի՛ւ եւ դողութեամբ կացցուք յաղօթս առաջի նորա, եւ գոհացարուք ըզնըմանէ ի գիշերային ժամուս յայսմիկ, վասն իրաւանց եւ արդարութեան նո՛րա: Որ ընտրեաց ըզմեզ ողորմութեամբն իւրով, եւ շնորհեսց մեզ բերել ըզնըմանութիւն երկնային հրեշտակացն ի փառաբանիչըս Տեառն Աստուծոյ ամենեցուն եւ մե՛զ լի՛նի՛լ: Ե՛ւ մե՛ք այսուհետեւ սըբբելով զանձինըս մեր ի խըղճէ եւ ի չա՛ր գո՛րծո՛ց: Համբարձցուք ըզձեռըս մեր ի սըբբութիւն առանց բարկութեան եւ երկմը՛-

Awake and prepare oil for the lamps, with your warm tears! Alleluia!

Awake and do not sleep, dozing off like the foolish virgins! Alleluia!

Awake, and let us fall down and say with tears! Alleluia!

Awake, why do you sleep, O Lord? Do not reject us forever.

Arise, O Lord, and help us that we may give praise to your name.

Now and always, to the Father and to the Son and to the Holy Spirit. Amen.

We who have awakened from the night's comfortable rest.

May the Lord, the lover of mankind grant us also the consolation by means of the comfort of the Church.

With fear and trembling let us pray.

Come let us confess our sins.

And we will find from Christ remission and great mercy.

Forever and ever. Amen. Alleluia! Alleluia! Alleluia!

Amen. Alleluia! Alleluia! Alleluia!

EXHORTATION

DCN. Having awakened all of us from the comfort of sleep that was granted to us by God, the lover of mankind, for our consolation and comfort of our weakness; We have come together to praise and honor the all-Holy name of our Lord and Savior Jesus Christ in spiritual song; and let us with fear and trembling stand in prayer before him, and give him thanks at this night hour for his righteous judgment, who has chosen us by his mercy, and has granted us to resemble the heavenly angels so that we too would become like those who praise the Lord God of all. And henceforth cleansing ourselves of evil consciences and evil works, we lift up our hands in holiness, without anger or doubt. With faith, let us beseech from him expiation and forgiveness of our transgressions, confessing the secrets of our heart to God who knows all secrets;

տո՛ւթեա՛ն: Հաւատո՛ւ ի խընդրեսցուք ի նրմանէ ըզքաւութիւն եւ ըզթողութիւն յանցանա՛ց մե՛րո՛ց: Խոստովա՛ն լինելով ըզգաղտնիս սըրտից մերոց ծածկազիտին Ա՛ստո՛ւծո՛յ: Ո՛րպէ՛ս զի ընդունելով ըզպաղատանըս մեր աղօթիւք եւ բարեխօսութեամբ ամենա՛յն սը՛րբո՛ց: Շնորհեսցէ՛ մեզ մարդասէրն Աստուած կեալ առաքինութեամբ եւ անարատ վարուք ըստ կամաց նորա յայսըմ ա՛շխա՛րհի՛ս: Եւ արժանատի լինելով յաւիտենական եւ երկնային խո՛րանա՛ցն: Զո՛ր խո՛ստա՛ցա՛ւ սիրելեաց իւրոց՝ ճշմարիտն Աստուած Յիսուս Քրիստոս, Տէր մեր, կեցո եւ ողո՛րմեա՛:

ԴՊՐ. Կե՛ցո՛, Տէ՛ր:

ՍՐԿ. Ըզմընացուած գիշերիս խաղաղութեամբ անցուցանել՝ հաւատո՛ւ ի Տեառնէ՛ խընդրե՛սցո՛ւք:

ԴՊՐ. Շնորհեա՛, Տէ՛ր:

ՍՐԿ. Ըզհրեշտակ խաղաղութեան պահապան անձանց մե՛րո՛ց՝ ի Տեառնէ՛ խընդրե՛սցո՛ւք:

ԴՊՐ. Շնորհեա՛, Տէ՛ր:

ՍՐԿ. Ըզքաւութիւն եւ ըզթողութիւն յանցանա՛ց մե՛րո՛ց՝ ի Տեառնէ՛ խընդրե՛սցո՛ւք:

ԴՊՐ. Շնորհեա՛, Տէ՛ր:

ՍՐԿ. Ըզսըրբոյ խաչին մե՛ծ եւ կարող զօրութիւնն յօգնութիւն անձանց մերո՛ց՝ ի Տեառնէ՛ խընդրե՛սցո՛ւք:

ԴՊՐ. Շնորհեա՛, Տէ՛ր:

ՍՐԿ. Եւ ե՛ւրս միաբա՛ն վասը՛ն ճշմարիտ եւ սուրբ հաւատոյս մերո՛յ՝ ըզՏէ՛ր աղաչե՛սցո՛ւք:

ԴՊՐ. Տէ՛ր, ողո՛րմեա՛:

ՍՐԿ. Զանձինըս մե՛ր եւ ըզմիմեանըս Տեա՛ռն Աստուծոյ ամենակալի՛ն յա՛նձն արա՛սցո՛ւք:

ԴՊՐ. Քեզ Տեա՛ռնդ յանձն եղի՛ցո՛ւք:

ՍՐԿ. Ողորմեաց մե՛զ, Տէր Աստուած մե՛ր, ըստ մեծի ողորմութեան քո՛ւմ. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ:

ԴՊՐ. Տէր, ողորմեա, Տէր, ողորմեա, Տէր, ողորմեա:

so that accepting our supplications through the prayers and intercession of all the saints, may God the lover of mankind grant us to live a virtuous and pure life in this world according to his will and to be worthy of the eternal heavenly dwellings, which our Lord Jesus Christ, the true God, promised to his loved ones. Our Lord, save us and have mercy upon us.

CHR. Save us, O Lord.

DCN. That we may pass the rest of this evening in peace; with faith let us ask of the Lord.

CHR. Grant, O Lord.

DCN. That the angel of peace be the guardian of our souls, let us ask of the Lord.

CHR. Grant, O Lord.

DCN. For the remission and forgiveness of our transgressions, let us ask of the Lord.

CHR. Grant, O Lord.

DCN. The great and mighty power of the holy cross for our help, let us ask of the Lord.

CHR. Grant, O Lord.

DCN. Again with one accord for our true and holy faith, let us beseech the Lord.

CHR. Lord, have mercy.

DCN. Let us commit ourselves and one another to the Lord God almighty.

CHR. To you, O Lord, we commit ourselves.

DCN. Have mercy upon us, O Lord, our God, according to your great mercy. Let us all say with one accord:

CHR. Lord, have mercy. Lord, have mercy, Lord, have mercy.

Առաւօտ լուսոյ, արեգակն արդար, առ իս լոյս ծագեա: Բրդխուամն ի Հօրէ, բրդխեա ի հոգ-  
ւոյս, բան քեզ ի հաճոյս:

Գանձդ ողորմութեան, գանձիդ ծածկելոյ, գրտող զիս արա: Դուռն ողորմութեան, դաւանողիս բաց, դասեցո վերնոցն:

Երբեակ միութիւն, եղելոց խնամող, եւ ինձ ողորմեա: Զարթիր, Տէր, յօգնել, զարթո ըզ-  
թըմբեալս, գուարթնոց նրմանիլ:

Էդ Հայր անըսկիզբն, էակից Որդի, է միշտ Սուրբ Հոգի: Ընկալ զիս գրթած, ընկալ ողորմած, ընկալ մարդասէր:

Թագաւոր փառաց, թողութեանց տըլող, թող ինձ ըզյանցանս: Ժողովող բարեաց, ժողովեա եւ զիս, ժողովս անդրանկաց:

Ի քէն, Տէր, հայցեմք, ի մարդասիրէդ, ինձ բըժըշկութիւն: Լեր կեանք մեռելոյս, լոյս խաւարելոյս, լուծանող ցաւոյս:

Խորհրդոց գիտող, խաւարիս շնորհեա, խորհուրդ լուսաւոր: Ծընուելդ Հօր ծոցոյ, ծածկելոյս ստուերաւ, ծագեա լոյս փառաց:

Կենարար փրկիչ, կեցո ըզմեռեալս, կանգնեա զգըրորեալս: Հաստեա հաւատով, հաստատեա յուսով, հիմնեցո սիրով:

Զայնիւս աղաչեմ, ձեռօքս պաղատիմ, ձիր բարեաց շնորհեա: Ղամբարամբ լուսոյ, ղեկավար ճարտար, ղօղեալս ամբացո:

Ճառագայթ փառաց, ճանապարհ ինձ ցոյց, ճեպել ի յերկինս: Միածինըդ Հօր, մոյժ զիս յառագաստ, մաքուր հարսանեացդ:

Յորժամ գաս փառօք, յահագին աւուրն, յիշեա զիս, Քրիստոս: Նորոգող հնութեանց, նորոգեա եւ զիս, նորոգ զարդարեա:

Շնորհատու բարեաց, շնորհեա զքաւութիւն, շնորհեա զթողութիւն: Ուրախացո, Տէր, ոգւոյս փրկութեամբ, ոյր վասն եմ ի սուգ:

Չար մըշակողին, չար սերմանց նորին, չորացո զպըտուղն: Պարգեւիչ բարեաց, պարգեւեա իմոց պարտեացս թողութիւն:

Ձուր շնորհեա աչացս, ջերմ հեղուլ զարտօսր, ջընջել ըզյանցանս: Ռեսիներդ քաղցու, ռամ հոգւոյս արբո, ռահ ցոյց ինձ լուսոյ:

Morning of light, righteous sun, shine light on me. [O Spirit] Emanator from the Father, emanate from my heart words pleasing to you.

Treasure of mercy, make me a finder of your hidden treasure. Open to me, a confessor, the door of mercy, and rank me with the angels.

Triune Unity, you who take care of creatures, have mercy upon me also. Arise, O Lord, to help, awaken me who is sleep that I resemble the angels.

Father without beginning, consubstantial Son, everlasting Holy Spirit, receive me, O compassionate, receive me, O merciful, receive me, O lover of mankind.

King of glory, giver of forgiveness, forgive my trespasses. Gatherer of all that is good, gather me also with the assembly of the first-borns.

I entreat you, O lover of mankind, to heal me. Be life for me who is dead, light for me who is in darkness, O dispeller of my pain.

Knower of thoughts, grant to my darkened mind bright thoughts. Born from the Father's bosom, shine on me, who is covered by shadow, the light of glory.

Life-giving Savior, give life to me who is dead, raise me who has fallen. Strengthen me in faith, sustain me in hope and establish me in love.

With my voice I supplicate, with my hands I implore, grant me the good gift. With lighted lantern, O skillful captain, save me who am drowning.

Glorious ray, show me the way that hastens me to heaven. O only-begotten of the Father, make me enter your pure wedding bridal chamber.

When you come with glory on that awesome day, remember me, O Christ. You who renew old things, renew me also, adorn me with newness.

Giver of good things, grant expiation, grant forgiveness. Gladden me, O Lord, by saving my soul, for which I am in mourning.

Wither the fruit of the evil sower's evil seeds. Bestower of good things, grant forgiveness to my trespasses.

Give tears to my eyes that cry fervently to erase my sins. Make my miserable soul drink of your sweet resin, and show me the luminous way.

Սէր անուն Յիսուս, սիրով քով ճըմբեա,  
սիրտ իմ քարեղէն: Վասըն գըթութեան, վասն  
ողորմութեան, վերըստին կեցո:

Տենչալույդ տեսեամբ, տուր ինձ յագենալ,  
Տէր Յիսուս Քրիստոս: Բաբունդ երկնաւոր, ըս-  
տեա զաշակերտս, ըամից երկնայնոց:

Յօղ արեան քո, Տէր, ցօղեա ի հոգիս, ցըն-  
ծասցէ անձն իմ: Իիւծեալըս մեղօք, լիւծեալ  
աղաչեմ, լիւսել ինձ բարիս:

Փըրկիչ բողբոջ, փուլթա զիս փըրկել, փոր-  
ծութեանց մեղաց: Քաւիչ յանցանաց, քաւեա  
զօրհնաբանս, քեզ երգել ըզփառս:

Սըրբուհւոյ Աստուածածնին բարեխօսու-  
թեամբ:

Յիչեա, Տէր, եւ ողորմեա:

O Jesus your name is love; with your love,  
crush my stony heart. For the sake of your com-  
passion, for the sake of your mercy, save me again.

O Lord Jesus Christ, satisfy me with your  
desirable vision. O heavenly teacher, gather me  
your disciple with the celestial assembly.

Sprinkle in my soul with the dew of your  
blood, O Lord, that I may rejoice. Wasted away by  
sin, languishingly I pray that you make me good.

Savior of all, make haste to save me from  
the temptations of sin. Expiator of sins, have mer-  
cy upon me that I may sing praises to you.

Through the intercession of the holy Mother  
of God.

Remember, O Lord, and have mercy upon us.

*Aravod looso, arékagn artar, ar is looys dzakya. Pûkhoomn i Horé, pûkhya i hokvooyis, pan kéz i hajooys.*  
*Kantst voghormootyan, kantsit dzadzgélo, kûdogh zis ara. Toorn voghormootyan, tavanoghish pats, tasétso vérnotsn.*  
*Yéryag miyootyoon, yéghélots khnamogh, yév ints voghormya. Zartir, Dér, hoknél, zarto úz-tûmryals, zvarnots nûmanil.*  
*Ét Hayr anûsgizpn, éyagits Vorti, é mishd Soorp Hoki. Úngal zis kûtadz, úngal voghormadz, úngal martasér.*  
*Takavor parats, toghootyants dúvogh, togh ints úz-hantsans. Zhoghovogh paryats, zhoghovya yév zis, zhoghovs antrangats.*  
*i kén, Dér, haytsémk, i martasirét, ints pûzhûshgootyoon. Lér gyank mérélooyis, looyis khavaré-looyis, loodzanogh tsavooyis.*  
*Khorhûrtots kidogh, khavaris shnorhya, khorhoort loosavor. Dzûnoont Hor dzotso, dzadzgé-looyis sdvérav, dzakya looyis parats.*  
*Génarar pûrgich, gétso úzméryals, ganknya zkûloryals. Hasdya havadov, hasdadya hoosov, himnétso sirov.*  
*Tsainivs aghachém, tséroks baghadim, tsir paryats shnorhya. Ghamparamp looso, ghégavar jardar, ghoghyals amratso.*  
*Jarakayt parats, janabarh ints tsooyts, jébél i hérgins. Miyadzinût Hor, mooydz zis harakasd, makoor harsanyatst.*  
*Horzham kas parok, hahakin avoorn, hishya zis, Krisdos. Norokogh hnootyants, norokya yév zis, norok zartarya.*  
*Shnorhadoo paryats, shnorhya zkavootyoon, shnorhya ztoghootyoon. Oorakhatso, Dér, vokvooyis pûrgootyamp, vooyr vasn ém i sook.*  
*Char múshagoghîn, char sérmants norin, choratso zbûdooghn. Barkévich paryats, barkevya imots bardyats toghootyoon.*  
*Choor shnorhya achatss, chérm héghool zardosr, chûnchél úz-hantsans. Rédinût kaghtsoo, ram hokvooyis arpo, rah tsooyts ints looso.*  
*Sér anoon Hisoos, sirov kov jûmlya, sird im karéghén. Vasûn kûtootyán, vasn oghormootyan, vérûsdin gétso.*

*Dénchalvooyt déslyamp, door ints hakénał, Dér Hisoos Krisdos. Rapoont yérgnavor, rodya zashagérds, ramits yérgnaynots.*

*Tsogh aryan ko, Dér; tsoghya i hokis, tsúndzastsé antsn im. Yoodzyalús méghok, yoodzyal aghachém, yoosél ints paris.*

*Pürgich polorits, poota zis pürgél, portsootyants méghats. Kavich hantsanats, kavya zorhnapan, kéz yérkél úzpars.*

*Súrpoohvo Asdvadzadznin parékhosootyamp.*

*Hishya, Dér; yév voghormya.*

## ԱՂՕԹՔ

## PRAYER

Քէն. Զքէն գոհանամք, Տէր Աստուած մեր, որ շնորհեցեր մեզ հանգիստ քնոյ խաղաղութեամբ, եւ զարթոցեալ ժամանեցուցեր զմեզ կանխել յերկրպագութիւն ահաւոր եւ փառաւորեալ անուանդ քում սրբոյ: Տուր մեզ, Տէր, աղահեմք զքեզ, զմնացուած գիշերիս խաղաղութեամբ անցուցանել, եւ զամենայն ժամանակս կենաց պանդխտութեան մերոյ, երկիւղիւրդ քո ամրացո եւ պահեա: Որպէս զի զգուշութեամբ եւ անարատ վարուք կրօնաւորեալք յայսմ աշխարհիս, ժամանեցուք յանքոյթ եւ ի խաղաղ նաւահանգիստ յաւիտենական ի կեանսդ: Շնորհօք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի, ընդ որում քեզ Հօր եւ Հոգւոյդ Սրբոյ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտենայն յաւիտենից: Ամէն:

*Խաղաղութիւն ամենեցուն:*

*Աստուծոյ երկիրպագեսցուք:*

Նայեաց, Տէր բարերար, ողորմութեամբ քով յերկրպագուս եւ ի փառաբանիչս անուանդ քում սրբոյ: Տէր զօրութեանց, խաղաղացո զանձինս մեր յամենայն սատանայական խռովութեանց եւ յաշխարհական զբօսանաց: Զհրեշտակ խաղաղութեան քո առաքեա առ մեզ, որ եկեալ պահեսցէ զմեզ անխռովս ի տուէ եւ ի գիշերի, յարթնութեան եւ ի հանգստեան մերում: Որպէս զի բարեպաշտութեամբ եւ արժանաւորապէս քեզ Տեառնդ ծառայելով ի կեանս յայտոսիկ, ժամանեցուք յաւիտենական երկնից արքայութեան քո, զոր պատրաստեցեր ի սկզբանէ աշխարհի սրբոց քոց: Եւ ընդ նոսին գոհանալով փառաւորեսցուք զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգիդ, այժմ եւ միշտ եւ յաւիտենայն յաւիտենից: Ամէն:

PRS. We give you thanks, O Lord our God, who has granted us a restful and peaceful sleep. And you have enabled us to wake up early in the morning and come to worship your awesome and glorious holy name. Grant us, O Lord, we beseech you that we may pass the rest of this night in peace. Strengthen us and keep us by your awe during all the days of our sojourning. So that after living prudently and leading a pure life in this world, we may reach your peaceful safe haven, your eternal life, through the grace and loving kindness of our Lord and Savior Jesus Christ, with whom to you, O Father, and to the Holy Spirit befits glory, dominion and honor, now and always, and forever and ever. Amen.

Peace be to all.

Let us bow down to God.

Look with your mercy, O beneficent Lord, upon us who worship and glorify your holy name. Lord of hosts, pacify us from all satanic tumult and worldly restlessness. Send unto us your angel of peace that he may come and keep us unperturbed by day and by night, while we are awake or resting. So that after having served you in this life in godliness and in a worthy manner, O Lord, we may reach your eternal heavenly kingdom, which you have prepared for your saints from the beginning of the world. And together with them, we may thankfully glorify the Father and the Son and the Holy Spirit, now and always, and forever and ever. Amen.

*Օրհնեա, անձն իմ, ըզՏէր, օրհնեցից ըզՏէր ի կեանս իմ. ալէլուիա: Սաղմոս ասացից Աստուծոյ իմոյ, մինչեւ եմ ես. ալէլուիա:*

*Մի՛ յուսայք յիշխանս՝ յորդիս մարդկան, զի ոչ գոյ փրկուիթիւն ի նոսա. ալէլուիա:*

*Ելցէ հոգի ի նոցանէ եւ դարձցին անդրէն ի հող, եւ յայնմ աւուր կորիցեն ամենայն խորհուրդք նոցա. ալէլուիա:*

*Երանի ազգի, որոյ Տէր Աստուած Յակոբայ օգնական է նմա, եւ յոյս նորա ի Տէր Աստուած է. ալէլուիա:*

*Ո արար զերկինս եւ զերկիր, ըզծով եւ զամենայն, որ է ի նոսա. ալէլուիա:*

*Ո պահէ ըզճրչմարտութիւն յաւիտեան եւ առնէ իրաւունս զըրկելոց. ալէլուիա:*

*ՓՈՒՍ. Գովեա, Երուսաղէմ, ըզՏէր. ալէլուիա:*

*Եւ օրհնեա զԱստուած քո, Սիոն. ալէլուիա:*

*Զի զօրացոյց ըզնիզըս դրանց քոց եւ օրհնեաց զորդիս քո ի քեզ. ալէլուիա:*

*Ո եզ ըզսահմանըս քո ի խաղաղութիւն, պարարտութեամբ ցորենոյ լըցոյց ըզքեզ. ալէլուիա:*

*Առաքէ ըզբան իւր յերկիր, վաղվաղ ընթանան պատգամք նորա. ալէլուիա:*

*Դրնէ ըզձիւն որպէս զասր, եւ ըզմէզ որպէս փոշի ցանեաց. ալէլուիա:*

*Արկանէ ըզսառն որպէս պատառս. առաջի ցըրտոյ նորա ո՞ կարէ կալ. ալէլուիա:*

*Առաքէ ըզբան իւր եւ հալէ զնոսա, շընչեսցեն հողմք, եւ զնասցեն ջուրք. ալէլուիա:*

*Պատմէ ըզբան իւր Յակոբայ, զարդարութիւն եւ զիրաւունս Իսրայէլի. ալէլուիա:*

*Ոչ այսպէս արար ամենայն ազգաց Տէր եւ ըզգատաստանս իւր ոչ յայտնեաց նոցա. ալէլուիա:*

*Փառք Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սըբբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն: Ալէլուիա:*

Praise the Lord, O my soul! I will praise the Lord as long as I live. Alleluia! I will sing praises to my God all my life long. Alleluia!

Do not put your trust in princes, in mortals, in whom there is no help. Alleluia!

When their breath departs, they return to the earth; on that very day their plans perish. Alleluia!

Happy are those whose help is the God of Jacob, whose hope is in the Lord their God. Alleluia!

Who made heaven and earth, the sea, and all that is in them. Alleluia!

Who keeps faith for ever; who executes justice for the oppressed. Alleluia!

ANT. Praise the Lord, O Jerusalem! Alleluia!

Praise your God, O Zion! Alleluia!

For he strengthens the bars of your gates; he blesses your children within you. Alleluia!

He grants peace within your borders; he fills you with the finest of wheat. Alleluia!

He sends out his command to the earth; his word runs swiftly. Alleluia!

He gives snow like wool; he scatters frost like ashes. Alleluia!

He hurls down hail like crumbs—who can stand before his cold? Alleluia!

He sends out his word, and melts them; he makes his wind blow, and the waters flow. Alleluia!

He declares his word to Jacob, his statutes and ordinances to Israel. Alleluia!

He has not dealt thus with any other nation; they do not know his ordinances. Alleluia!

Glory be to the Father and to the Son and to the Holy Spirit. Now and always and forever and ever. Amen. Alleluia!

Այսօր ի կատարումն աստուածային ընթրեաց նոր ուխտի ճրշմարտութեան քո, ի վերնատունըն խորհրդոյ տարամերժեալ Յուդաս ի հօտէն փոքու. ուստի եւ դու գառն Աստուծոյ դիմեալ կամաւ ի մահ խաչի առ ի բառնալ ըզմեղս աշխարհի. վասն որոյ խնայեա ի մեզ Քրիստոս կամաւոր քո չարչարանօք:

Today, at the end of the divine supper of the new and true covenant in the Upper Room where the mystery took place, Judas withdrew from the little flock; and you, O Lamb of God, of your own will went to your death on the cross, to take on yourself the sins of the world; therefore have pity on us, O Christ, for the sake of your voluntary sufferings.

Բեմին վրայ դրուած մումբը կը վառին, բացի սեւ մումբն, որ դրուած է ամենէն ծայրը: Իւրաքանչիւր Աւետարանի ընթերցումէն ետք, նախ մէկ, ապա գոյգ-գոյգ մարել մումբը, վառ պահելով կեդրոնի մեծ մումբ:

*The candles on the bema are lit except the black one, which is put at the far end. After each reading of the Gospel passage, the candles, first a single one and then in couples are put out, leaving lit the big candle in the center.*

ՍԱՂՄՈՍ 2.1

PSALM 2:1

– Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք, եւ ժողովուրդք խորհեցան ի սնոտիս:

– Why do the nations conspire, and the peoples plot in vain?

ԵՐԳ

HYMN

Իշխանք ժողովեցա՞ն ի մի՛ասին. վասըն Տեառն եւ վա՛սն օծելոյ նորա՛:

The rulers take counsel together, against the Lord and his anointed.

Երեք անգամ, վերջինը՝ ամբողջ ձայն մը բարձր:

*Repeat thrice, the third time a tone higher:*

ԵՐԳ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ

HYMN OF ST. NERSES THE GRACEFUL

Այսօր անճառ լուսոյն ծագումն ի փրկիութեան մեր կատարումըն, խոնարհի ի վերնատունն ի ստուերական սօնից լրբումն. նախ քան զընթրիւրն խորհրդոյ սփածաւ դենջակ արկողն լուսոյ, եւ ջուր առեալ ծառայաբար զոտս լրանայր զաշակերտացն:

Today the emanation from the ineffable light, to complete our salvation, humbled himself in the Upper Room, fulfilling the shadowy feasts, and he girded himself with a towel, before the mystical supper. He who clothes himself with light, took water, and like a servant washed the feet of his disciples.

Բանին Հօր փառաց լուսոյ Պետրոս մերձիլ յոտս ոչ ներէր, այնըմ ձեռաց որոյ են գործք երկնից երկինք եւ երկրաւորք. որով կուրաց աչրք բացան խուլք եւ համերք արձակեցան, որ վերածեաց զինքն ի ծովին սաստեաց ալեացն եւ լրուեցին:

Peter would not allow the Word of the glorious Father of light to come near his feet, those hands that created the heaven of heavens and all that is earthly. Those hands that opened the eyes of the blind and healed the deaf and the dumb, the hands that lifted Peter out of the sea and rebuked the waves and they calmed.

Գրլխոյն ընտրեալ հօտին փոքու սաստէր զխորհուրդն ոչ զիտելոյ, որով դառնայր եւ հնազանդէր զոտս եւ զգրլուխս մաքրել մաղթէր. գրլխոյս ասէ չէ ինչ պիտոյ լուացումըն ջրոյ զի լուացեալ է, ոտիցըդ պէտք են մաքրութեան յօղիլ ի գլուխս սրբութեամբ:

He rebuked [Peter] the head of the chosen little flock for not knowing the mystery. Peter turned and obeyed, and asked that he wash his feet and his head. Jesus says: “There is no need to wash your head with water, for it has been washed; your feet need cleansing so that you may in holiness be united to me who am your head.

*Aysor anjar loosooyñ dzakoomn i pûrgootyan mér gadaroomûn, khonarhi i vérnadoonn i sd-  
véragan donits lûroomn, nakh kan zûntrisûn khorhûrto spadzav ghénchag argoghn looso, yév choor  
aryal dzarayapar zods lûvanayr zashagérdatsn.*

*Panin Hor parats looso Bédros mértsil hods voch nérér, aynûm tsérats voro yén kordzk yérgnits  
yérgink yév yérgravork, vorov goorats achûk patsan khoolk yév hamérk artsagétsan, vor véradzyats  
zinkn i dzovin sasdyats alyatsn yév lûrétsin.*

*Kûlkhooyñ ûndryal hodin pokoo sasdér zkhorrhoortn voch kidélo, vorov tarnayr yév hnazan-  
tér zods yév zkûlookhs makrél maghtér, kûlkhooyñ asé ché inch bido lvatsoomûn chro zi lvatsyal é,  
voditsût bédk én makrootyan hotil i klookhûs sûrpootyamp.*

ՍՐԿ. *Օրթի:*

ՔՀՆ. *Խաղաղութիւն ամենեցուն:*

ԴՊՐ. *Եւ ընդ հոգւոյդ քում:*

ՍՐԿ. *Երկիւղածութեամբ լուարուք:*

ՔՀՆ. *Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի  
որ ըստ Յովհաննու (13:16–14:31):*

ԴՊՐ. *Փառք քեզ, Տէր, Աստուած մեր:*

ՍՐԿ. *Պօսխումէ:*

ԴՊՐ. *Ասէ Աստուած:*

ՔՀՆ. *Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.–*

*Լա՛ւ գիտցէք, թէ ծառան իր տիրոջմէ մեծ  
չէ եւ ոչ ալ զրկուածը՝ զինք զրկողէն: Եթէ ասիկա  
գիտէք, երանելի պիտի ըլլաք՝ եթէ գործադրէք  
զայն: Խօսքս բոլորիդ համար չէ, որովհետեւ  
ես կը ճանչնամ ընտրածներս. այլ որպէսզի  
իրականանայ Սուրբ գիրքին խօսքը, որ կ'ըսէ.  
«Ան որ ինծի հետ հաց կ'ուտէր՝ դաւաճանեց  
ինծի»: Հիմակուրնէ իսկ կ'ըսեմ ձեզի, տակաւին  
ասիկա չպատահած, որպէսզի երբ պատահի՝  
հաւատաք թէ ես եմ: Լա՛ւ գիտցէք, թէ ով որ  
կ'ընդունի ան՝ որ ես պիտի զրկեմ՝ զիս ընդունած  
կ'ըլլայ, եւ ով որ զիս կ'ընդունի՝ ընդունած  
կ'ըլլայ զիս զրկողը:*

*Այս խօսքերը ըսելէ ետք՝ Յիսուս հոգեպէս  
խռովեցաւ եւ բացայայտօրէն ըսաւ.*

*– Լա՛ւ գիտցէք, թէ ձեզմէ մէկը պիտի  
մատնէ զիս:*

*Աշակերտները իրարու կը նայէին՝ շուա-  
րած, թէ որո՞ն համար կ'ըսէ: Աշակերտներէն  
մէկը, զոր Յիսուս կը սիրէր, բազմած էր Յիսուսի  
կողքին: Սիմոն Պետրոս նշան ըրաւ անոր՝ հար-  
ցնելու թէ որո՞ն համար կ'ըսէ:*

DCN. Rise.

PRS. Peace be to all.

CHR. And with your spirit.

DCN. Listen in awe.

PRS. To the holy Gospel of Jesus Christ accord-  
ing to John (13:16-14:31).

CHR. Glory be to you, Lord, our God.

DCN. Be attentive.

CHR. God is speaking.

PRS. Our Lord Jesus Christ says:

“Very truly, I tell you, servants are not great-  
er than their master, nor are messengers greater  
than the one who sent them. If you know these  
things, you are blessed if you do them. I am not  
speaking of all of you; I know whom I have cho-  
sen. But it is to fulfil the scripture, “The one who  
ate my bread has lifted his heel against me.” I tell  
you this now, before it occurs, so that when it does  
occur, you may believe that I am he. Very truly, I  
tell you, whoever receives one whom I send re-  
ceives me; and whoever receives me receives him  
who sent me.”

After saying this Jesus was troubled in spir-  
it, and declared,

“Very truly, I tell you, one of you will betray  
me.”

The disciples looked at one another, uncer-  
tain of whom he was speaking. One of his disci-  
ples—the one whom Jesus loved—was reclining  
next to him; Simon Peter therefore motioned to  
him to ask Jesus of whom he was speaking.

Այդ աշակերտը Յիսուսի կողմը դառնալով՝  
հարցուց.

– Տէ՛ր, ո՞վ է:

Յիսուս պատասխանեց.

– Պատառը թաթիւելով որո՛ւն որ տամ՝  
ան է:

Եւ պատառը թաթիւելով տուաւ Իսկարիոտացի Յուդային: Յուդա հազիւ պատառը առած՝ Սատանան իր մէջ մտաւ:

Յիսուս ըսաւ անոր.

– Ինչ որ պիտի ընես՝ շուտով ըրէ:

Սեղանին շուրջ նստողներէն ո՛չ ոք հասկցաւ, թէ ինչո՛ւ այս խօսքը ըսաւ անոր: Եւ որովհետեւ Յուդայի մօտ կը գտնուէր գանձանակը, աշակերտներէն ոմանք կարծեցին՝ թէ Յիսուս անոր ըսաւ. «Գնա՛ եւ տօնին առիթով ինչ որ մեզի պէտք է՝ գնէ, եւ կամ աղքատներուն բան մը տուր»:

Յուդա պատառը առնելէ ետք՝ անմիջապէս դուրս ելաւ: Եւ գիշեր էր:

Յուդայի մեկնելէն ետք, Յիսուս ըսաւ.

– Այժմ փառաւորուեցաւ Մարդու Որդին եւ Աստուած փառաւորուեցաւ անով: Եւ եթէ Աստուած փառաւորուեցաւ անով, Աստուած ալ զայն պիտի փառաւորէ իրմով. եւ շուտով պիտի փառաւորէ զայն: Որդեակնե՛ր, կարճ ժամանակ մըն ալ ձեզի հետ եմ. պիտի փնտուէք զիս: Եւ ինչպէս որ Հրեայ ղեկավարներուն ըսի՝ ձեզի ալ կ'ըսեմ. «Հոն՝ ուր ես կ'երթամ, դուք չէք կրնար գալ»: Նոր պատուիրան մը կու տամ ձեզի.– Սիրեցէ՛ք իրար: Ինչպէս ես ձեզ սիրեցի՝ դուք ալ իրար սիրեցէք: Ձեր իրար սիրելով է որ մարդիկ պիտի գիտնան, թէ դուք իմ աշակերտներս էք:

– Տէ՛ր, ո՞ւր կ'երթաս,– հարցուց Սիմոն Պետրոս:

Յիսուս պատասխանեց.

– Հոն՝ ուր ես կ'երթամ, այժմ չես կրնար գալ, բայց յետոյ պիտի գաս ետեւէս:

Պետրոս ըսաւ.

– Տէ՛ր, ինչո՞ւ հիմա չեմ կրնար հետեւիլ քեզի: Կեանքս անգամ կը զոհեմ քեզի համար:

Յիսուս պատասխանեց.

– Կեա՛նքդ պիտի զոհես ինձի համար: Լա՛ւ գիտցիր, որ աքաղաղը չկանչած՝ դուն երեք անգամ պիտի ուրանաս զիս:

So while reclining next to Jesus, he asked him,

“Lord, who is it?”

Jesus answered,

“It is the one to whom I give this piece of bread when I have dipped it in the dish.”

So when he had dipped the piece of bread, he gave it to Judas son of Simon Iscariot. After he received the piece of bread, Satan entered into him. Jesus said to him,

“Do quickly what you are going to do.”

Now no one at the table knew why he said this to him. Some thought that, because Judas had the common purse, Jesus was telling him, “Buy what we need for the festival”; or, that he should give something to the poor.

So, after receiving the piece of bread, he immediately went out. And it was night.

When he had gone out, Jesus said,

“Now the Son of Man has been glorified, and God has been glorified in him. If God has been glorified in him, God will also glorify him in himself and will glorify him at once. Little children, I am with you only a little longer. You will look for me; and as I said to the Jews so now I say to you, “Where I am going, you cannot come.” I give you a new commandment, that you love one another. Just as I have loved you, you also should love one another. By this everyone will know that you are my disciples, if you have love for one another.”

Simon Peter said to him, “Lord, where are you going?”

Jesus answered,

“Where I am going, you cannot follow me now; but you will follow afterwards.”

Peter said to him,

“Lord, why can I not follow you now? I will lay down my life for you.”

Jesus answered,

“Will you lay down your life for me? Very truly, I tell you, before the cock crows, you will have denied me three times.”

Ապա Յիսուս ըսաւ իր աշակերտներուն.

– Թող չխռովին ձեր սիրտերը: Հաւատացէ՛ք Աստուծոյ, հաւատացէ՛ք նաեւ ինծի: Հօրս տան մէջ շատ օթեւաններ կան. եթէ այդպէս չըլլար՝ չէի ըսեր ձեզի, թէ կ'երթամ եւ ձեզի համար տեղ կը պատրաստեմ: Եւ երբ երթամ եւ ձեզի համար տեղ պատրաստեմ, դարձեալ պիտի գամ եւ ձեզ քովս առնեմ, որպէսզի ըլլաք հոն՝ ուր ես կը գտնուիմ: Եւ դուք գիտէք թէ ո՛ւր կ'երթամ եւ անոր ճամբան ալ գիտէք:

Թովմաս ըսաւ իրեն.

– Տէ՛ր, չենք գիտեր ուր կ'երթաս. արդ, ինչպէ՞ս կրնանք ճամբան գիտնալ:

Յիսուս պատասխանեց անոր.

– Ե՛ս եմ ճամբան, ճշմարտութիւնը եւ կեանքը: Միայն ինձմով կարելի է Հօրս երթալ: Եթէ զիս ճանչնայիք՝ Հայրս ալ պիտի ճանչնայիք. եւ այժմէն իսկ դուք գիտէք զայն եւ տեսած էք զայն:

Փիլիպպոս ըսաւ.

– Տէ՛ր, ցոյց տուր մեզի Հայրը եւ կը բաւէ մեզի:

Յիսուս պատասխանեց.

– Այսքան ատեն ձեզի հետ եմ եւ տակաւին չճանչցա՞ր զիս, Փիլիպպո՛ս: Ով որ զիս տեսաւ՝ Հայրը տեսած եղաւ, ալ ի՞նչպէս կ'ըսես՝ «Ցոյց տուր մեզի Հայրը»: Ձե՞ս հաւատար թէ ես Հօրս մէջ եմ եւ Հայրս իմ մէջս է: Այս խօսքերը որ ձեզի կ'ըսեմ՝ ես ինձմէ չեմ ըսեր. Հայրը որ մէջս կը բնակի՝ իմ միջոցաւ կը կատարէ իր գործերը: Հաւատացէ՛ք ինծի, թէ ես Հօրս մէջ եմ եւ Հայրը իմ մէջս. եթէ ոչ խօսքերուս համար՝ գոնէ կատարած գործերուս համար հաւատացէք: Լա՛ւ գիտցէք, թէ ով որ ինծի կը հաւատայ՝ պիտի կատարէ ինչ որ ես կ'ընեմ եւ անոնցմէ աւելին ալ պիտի կատարէ, որովհետեւ ես Հօրս քով կ'երթամ: Եւ ինչ որ իմ անունովս խնդրէք՝ պիտի կատարեմ զայն, որպէսզի Հայրը փառաւորուի Որդիով: Այո՛, եթէ ոեւէ բան խնդրէք իմ անունովս՝ պիտի կատարեմ զայն:

Եթէ կը սիրէք զիս՝ պիտի գործադրէք իմ պատուիրաններս: Եւ ես Հօրս պիտի աղաչեմ՝ որ ուրիշ Մխիթարիչ մը տայ ձեզի, որպէսզի յաւիտեան ձեզի հետ ըլլայ: Անիկա Սուրբ Հոգին է, որ ճշմարտութիւնը կը յայտնէ: Այսարհը չի

“Do not let your hearts be troubled. Believe in God, believe also in me. In my Father’s house there are many dwelling-places. If it were not so, would I have told you that I go to prepare a place for you? And if I go and prepare a place for you, I will come again and will take you to myself, so that where I am, there you may be also. And you know the way to the place where I am going.”

Thomas said to him,

“Lord, we do not know where you are going. How can we know the way?”

Jesus said to him,

“I am the way, and the truth, and the life. No one comes to the Father except through me. If you know me, you will know my Father also. From now on you do know him and have seen him.”

Philip said to him,

“Lord, show us the Father, and we will be satisfied.”

Jesus said to him,

“Have I been with you all this time, Philip, and you still do not know me? Whoever has seen me has seen the Father. How can you say, ‘Show us the Father’”? Do you not believe that I am in the Father and the Father is in me? The words that I say to you I do not speak on my own; but the Father who dwells in me does his works. Believe me that I am in the Father and the Father is in me; but if you do not, then believe me because of the works themselves. Very truly, I tell you, the one who believes in me will also do the works that I do and, in fact, will do greater works than these, because I am going to the Father. I will do whatever you ask in my name, so that the Father may be glorified in the Son. If in my name you ask me for anything, I will do it.

“If you love me, you will keep my commandments. And I will ask the Father, and he will give you another Advocate, to be with you for ever. This is the Spirit of truth, whom the world cannot receive, because it neither sees him nor

կրնար գայն ընդունիլ, որովհետեւ ո՛չ կը տեսնէ եւ ո՛չ ալ կը ճանչնայ գայն: Բայց դուք կը ճանչնաք գայն, որովհետեւ ձեր մէջ պիտի մնայ եւ ձեզի հետ պիտի ըլլայ:

Որք պիտի չձգեմ ձեզ. կրկին պիտի գամ ձեզի: Մօտ ատենէն այլեւս աշխարհը զիս պիտի չտեսնէ, բայց դուք պիտի տեսնէք զիս, որովհետեւ ես կ'ապրիմ եւ դուք ալ պիտի ապրիք: Այն օրը դուք պիտի գիտնաք՝ թէ ես Հօրս մէջ եմ, դուք իմ մէջս եւ ես՝ ձեր մէջ: Ով որ կ'ընդունի իմ պատուիրաններս եւ կը գործադրէ գանոնք, ա՛ն է որ զիս կը սիրէ: Եւ Հայրս պիտի սիրէ զիս սիրողը: Ես ալ պիտի սիրեմ գայն եւ ինքզինքս յայտնեմ անոր:

Յուդան, ոչ Իսկարիոտացին, ըսաւ իրեն.

- Տէ՛ր, ի՞նչպէս կ'ըլլայ որ ինքզինքդ մեզի պիտի յայտնես եւ ոչ թէ աշխարհին:

Յիսուս պատասխանեց անոր.

- Ով որ կը սիրէ զիս՝ խօսքերս կը գործադրէ. Հայրս ալ պիտի սիրէ գայն եւ ես ու Հայրս անոր պիտի գանք եւ անոր հետ բնակինք: Եւ ով որ չի սիրեր զիս՝ խօսքերս չի գործադրեր: Այս ըսածներս որ լսեցիք՝ իմ խօսքերս չեն, այլ խօսքերը Հօրս, որ զիս զրկեց: Այս բոլորը խօսեցայ ձեզի, քանի տակաւին ձեզի հետ եմ: Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրս ձեզի պիտի զրկէ իմ անունովս, անիկա ձեզի ամէն ինչ պիտի սորվեցնէ եւ յիշեցնէ ինչ որ ես ձեզի ըսի:

Խաղաղութիւն կը թողում ձեզի. իմ խաղաղութիւնս է որ կու տամ ձեզի, որ այս աշխարհի տուած խաղաղութենէն տարբեր է: Մի՛ խռովիք ու մի՛ վախնաք: Լսեցիք ինչ որ ըսի ձեզի, թէ՛ «Ահա կ'երթամ, բայց կրկին պիտի գամ ձեզի»: Եթէ զիս սիրէիք, ուրախ պիտի ըլլայիք որ Հօրս կ'երթամ, որովհետեւ Հայրս ինձմէ մեծ է: Այս բոլորը ձեզի ըսի՝ նախ քան պատահիրը, որպէսզի երբ պատահին՝ այն ատեն հաւատաք: Այլեւս երկար պիտի չխօսիմ ձեզի, որովհետեւ ահա կու գայ այս աշխարհի իշխանը, որ իմ վրաս ո՛չ մէկ իշխանութիւն ունի: Բայց աշխարհը պէտք է գիտնայ թէ ես Հայրը կը սիրեմ եւ այդ է պատճառը, որ ինձի տուած բոլոր պատուիրածները կը կատարեմ: Ելէ՛ք, երթանք այստեղէն:

knows him. You know him, because he abides with you, and he will be in you.

“I will not leave you orphaned; I am coming to you. In a little while the world will no longer see me, but you will see me; because I live, you also will live. On that day you will know that I am in my Father, and you in me, and I in you. They who have my commandments and keep them are those who love me; and those who love me will be loved by my Father, and I will love them and reveal myself to them.”

Judas (not Iscariot) said to him,

“Lord, how is it that you will reveal yourself to us, and not to the world?”

Jesus answered him,

“Those who love me will keep my word, and my Father will love them, and we will come to them and make our home with them. Whoever does not love me does not keep my words; and the word that you hear is not mine, but is from the Father who sent me. “I have said these things to you while I am still with you. But the Advocate, the Holy Spirit, whom the Father will send in my name, will teach you everything, and remind you of all that I have said to you.

Peace I leave with you; my peace I give to you. I do not give to you as the world gives. Do not let your hearts be troubled, and do not let them be afraid. You heard me say to you, “I am going away, and I am coming to you.” If you loved me, you would rejoice that I am going to the Father, because the Father is greater than I. And now I have told you this before it occurs, so that when it does occur, you may believe. I will no longer talk much with you, for the ruler of this world is coming. He has no power over me; but I do as the Father has commanded me, so that the world may know that I love the Father. Rise, let us be on our way.”

*Բան անօրէնութեան եղին ի վե՛րայ ի՛մ. Տէ՛ր,  
Տէ՛ր, մի թողո՛ւր զի՛ս:*

They put deadly thing upon me, Lord, O Lord, do not forsake me.

*Երեք անգամ, վերջինը՝ ամբողջ ձայն մը բարձր:*

*Repeat thrice, the third time a tone higher:*

**ԵՐԳ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ**

**HYMN OF ST. NERSES THE GRACEFUL**

*Էլից զօրէնարն Մովսիսի, զոր խօսեցաւ ի Սինայի, եկեր ըզգառն օրինակին եւ ըզբաղարջն ընդ եղեգին, ըզհինն ի նորըս փոխելով՝ զըստուերն ի լոյս ճըշմարտելով՝ փոխան գառինն ինքըն գոլով Գառն Աստուծոյ նըւիրելով:*

He fulfilled the Law of Moses that was given at Sinai; he ate the typical lamb and the unleavened bread with bitter herbs, transforming the old into new, proving the shadow as the true light, being the Lamb of God, offering himself instead of the lamb.

*Ընդ բաղարջին Հաց անխըմոր ետ ըզմարմինն իւր գերկնաւոր՝ ըզկուսածինն՝ անսերմնաւոր զանապականն եւ զհոգեւոր, ընդ ոչխարին արեանն ուխտին ետ մեզ զարիւնն իւր ուխտ կըրկին եւ եղեգան դառնագունին փոխան՝ ըզվարս աստուածային:*

Instead of the unleavened bread he gave his heavenly body – born of the Virgin, without seed, incorruptible and spiritual. Instead of the blood of the covenant of the lamb, he gave us his blood as a new covenant, and instead of the bitterest vinegar, he gave us godly conduct.

*Թագաւորն արարածոց զհացըն կենաց ետ քաղցելոց եւ ըզբաժակն ուրախարար՝ որք յԱդամայ տըրտմեցելոց. այս նոր ուխտ է իմոյ արեան, փոխան հընոյ ուխտին արեանց, զոր յիշատակ իմ առնիցէք, մինչեւ եկից ես միւսանգամ:*

The King of creatures gave the bread of life to the hungry and the cup of joy to the grieved because of Adam. This is the New Covenant of my blood instead of the sacrifices of the Old Covenant; which you should do in my memory until I come again.

*Élits zorénsûn Movsisi, zor khosétsav i Sinayi, yégér ûzkarn orinagin yév ûzpagharchn ûnt yéghékin, ûz-hinn i norûs pokhélov, zûsvérn i looys júshmardélov, pokhan karinn inkûn kolov Karn Asdoodzo nûvirélov.*  
*Ûnt pagharchin hats ankhûmor yéd ûzmarminn yoor zérghavor, ûzgoosadzinn ansérmnavor zanabagann yév z-hokévor, ûnt vochkharin aryann ookhdin yéd méz zaryoonn yoor ookhd gûrgin, yév yéghékan tarnakoonin pokhan ûzvars asdvadzayin.*  
*Takavorn araradzots z-hatsûn génats yéd kaghtsélots, yév ûzpazhagn oorakharar, vork hAtama dûrdmétsélots, ays nor ookhd é imo aryan, pokhan húno ookhdin aryants, zor hishadag im arnitsék, minchév yégits yés myoosankam.*

- ՄՐԿ. *Օրթի:*
- ՔՀՆ. *Խաղաղութիւն ամենեցուն:*
- ԴՊՐ. *Եւ ընդ հոգւոյդ քուժ:*
- ՄՐԿ. *Երկիւղածութեամբ լուարուք:*
- ՔՀՆ. *Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Դուկասու (22.1–34):*
- ԴՊՐ. *Փառք քեզ, Տէր, Աստուած մեր:*
- ՄՐԿ. *Պռօսխումէ:*
- ԴՊՐ. *Ասէ Աստուած:*

- DCN. Rise.
- PRS. Peace be to all.
- CHR. And with your spirit.
- DCN. Listen in awe.
- PRS. To the holy Gospel of Jesus Christ according to Luke (22.1-34).
- CHR. Glory be to you, Lord, our God.
- DCN. Be attentive.
- CHR. God is speaking.

ՔՀՆ. Տէրն մեր Յիսուս Քրիստոս:

Մօտեցած էր Բաղարջակերաց տօնը, որ Զատիկ կը կոչուի: Աւագ քահանաներն ու Օրէնքի ուսուցիչները սկսան Յիսուսը ծածկաբար սպաննելու հնարք մը փնտռել, քանի ժողովուրդէն կը վախնային:

Ապա Սատանան մտաւ Իսկարիոտացի կոչուած Յուդային մէջ, որ տասներեկու աշակերտներէն մէկն էր: Ասիկա գնաց եւ խօսեցաւ աւագ քահանաներուն, Օրէնքի ուսուցիչներուն եւ տաճարի պահակապետներուն հետ, որպէսզի Յիսուսը անոնց յանձնէ: Անոնք շատ ուրախացան եւ խոստացան դրամ տալ իրեն: Յուդա համաձայնեցաւ եւ յարմար առիթ մը կը փնտռէր, որպէսզի Յիսուսը մատնէ անոնց՝ ժողովուրդէն ծածուկ:

Եկաւ Բաղարջակերաց օրը, երբ պէտք էր որ Զատիկին համար գառնուկը մորթուէր: Յիսուս Պետրոսն ու Յովհաննէսը դրկեց պատուիրելով.

– Գացէք եւ զատկական ընթրիքը պատրաստեցէք, որպէսզի ուտենք:

Անոնք հարցուցին.

– Ո՞ւր կ'ուզես որ ընթրիքը պատրաստենք: Յիսուս ըսաւ.

– Հազիւ քաղաք մտած՝ մարդու մը պիտի հանդիպիք, որ ջուրի սափոր մը շալկած է: Հետեւեցէ՛ք անոր եւ մտէք այն տունը ուր ինք կը մտնէ, եւ տանտիրոջ ըսէք. «Վարդապետը կ'ըսէ, թէ ո՛ւր է սենեակը ուր ես աշակերտներուս հետ զատկական ընթրիքը պիտի ուտեմ»: Անիկա վերնայարկը մեծ եւ կահաւորուած սենեակ մը ցոյց պիտի տայ ձեզի: Հոն պատրաստեցէք ընթրիքը:

Անոնք գացին եւ ամէն ինչ գտան Յիսուսի ըսածին պէս եւ պատրաստեցին զատկական ընթրիքը:

Երբ ժամը հասաւ, Յիսուս տասներեկու առաքեալներուն հետ սեղան բազմեցաւ, եւ ըսաւ անոնց.

– Շատ փափաքեցայ զատկական այս ընթրիքը ձեզի հետ ընել չարչարուելէս առաջ: Բայց կ'ըսեմ ձեզի, թէ այլեւս ասկէ պիտի չուտեմ, մինչեւ որ ճշմարիտ Զատիկը կատարուի Աստուծոյ արքայութեան մէջ:

Ապա գինիի բաժակը առաւ, շնորհակալութիւն յայտնեց Աստուծոյ եւ ըսաւ.

PRS. Our Lord Jesus Christ.

Now the festival of Unleavened Bread, which is called the Passover, was near. The chief priests and the scribes were looking for a way to put Jesus to death, for they were afraid of the people.

Then Satan entered into Judas called Iscariot, who was one of the twelve; he went away and conferred with the chief priests and officers of the temple police about how he might betray him to them. They were greatly pleased and agreed to give him money. So he consented and began to look for an opportunity to betray him to them when no crowd was present.

Then came the day of Unleavened Bread, on which the Passover lamb had to be sacrificed. So Jesus sent Peter and John, saying,

“Go and prepare the Passover meal for us that we may eat it.”

They asked him,

“Where do you want us to make preparations for it?”

“Listen,” he said to them, “when you have entered the city, a man carrying a jar of water will meet you; follow him into the house he enters and say to the owner of the house, “The teacher asks you, ‘Where is the guest room, where I may eat the Passover with my disciples?’ He will show you a large room upstairs, already furnished. Make preparations for us there.”

So they went and found everything as he had told them; and they prepared the Passover meal.

When the hour came, he took his place at the table, and the apostles with him. He said to them,

“I have eagerly desired to eat this Passover with you before I suffer; for I tell you, I will not eat it until it is fulfilled in the kingdom of God.”

Then he took a cup, and after giving thanks he said,

– Առէ՛ք ասիկա եւ իրարու փոխանցեցէ՛ք՝ խմելով ասկէ: Կ’ըսեմ ձեզի, թէ ասկէ ետք զինի պիտի չխմեմ, մինչեւ Աստուծոյ արքայութիւնը գայ:

Ապա հաց առաւ, շնորհակալութիւն յայտնեց Աստուծոյ, կտրեց եւ աշակերտներուն տրւաւ, ըսելով.

– Ասիկա մարմինս է, որ ձեզի համար տրուած է: Ասիկա կատարեցէք իմ յիշատակիս համար:

Նոյնպէս, ընթրիքէն ետք, բաժակն ալ առաւ եւ ըսաւ.

– Այս բաժակը Աստուծոյ նոր ուխտն է, կնքուած իմ արիւնովս, որ ձեզի համար կը հոսի: Բայց ահա զիս մատնողը ինձի հետ սեղան նստած է: Ճիշդ է որ Մարդու Որդին պիտի մեռնի՝ ինչպէս որ Աստուած սահմանած է, բայց վա՛յ այն մարդուն որ գայն կը մատնէ:

Անոնք սկսան իրարու հարցնել թէ իրենցմէ ո՛վ պիտի ընէ ատիկա:

Աշակերտներուն մէջ վէճ ծագեցաւ թէ իրենցմէ ո՛վ պիտի նկատուի մեծը: Յիսուս անոնց ըսաւ.

– Ազգերու թագաւորները կը տիրեն իրենց ժողովուրդներուն վրայ եւ իշխողները բարերար կը կոչուին իրենց հպատակներուն կողմէ: Բայց ձեր պարագային այդպէս պէտք չէ ըլլայ: Ընդհակառակը, ձեր մէջէն ամենէն մեծը թող ամենէն պզտիկին պէս ըլլայ, եւ առաջնորդը՝ սպասաւորին պէս: Ո՞վ է մեծը. սեղան բազմո՞ղը թէ սպասաւորը: Անշուշտ որ սեղան բազմողը: Բայց ես ձեր մէջ սպասաւորի պէս եմ: Դուք միշտ քովս մնացի՛ք փորձութիւններուս ընթացքին, եւ ես ահա կը խոստանամ թագաւորութիւն տալ ձեզի, ինչպէս Հայրս ինձի տալ խոստացաւ: Իմ թագաւորութեանս մէջ իմ սեղանէս պիտի ուտէք ու խմէք եւ պիտի բազմի՛ք գահերու վրայ՝ դատելու համար Իսրայէլի տասներկու ցեղերը:

Ապա Տէրը ըսաւ.

– Սիմո՛ն, Սիմո՛ն, ահա Սատանան ուզեց ձեզ ցորենի պէս մաղէ անցընել. բայց ես քեզի համար աղօթեցի, որ հաւատքդ չտկարանայ. եւ երբ կրկին ինձի դառնաս՝ եղբայրներդ ալ քաջպիտեան:

“Take this and divide it among yourselves; for I tell you that from now on I will not drink of the fruit of the vine until the kingdom of God comes.”

Then he took a loaf of bread, and when he had given thanks, he broke it and gave it to them, saying,

“This is my body, which is given for you. Do this in remembrance of me.”

And he did the same with the cup after supper, saying,

“This cup that is poured out for you is the new covenant in my blood. But see, the one who betrays me is with me, and his hand is on the table. For the Son of Man is going as it has been determined, but woe to that one by whom he is betrayed!”

Then they began to ask one another which one of them it could be who would do this.

A dispute also arose among them as to which one of them was to be regarded as the greatest. But he said to them,

“The kings of the Gentiles lord it over them; and those in authority over them are called benefactors. But not so with you; rather the greatest among you must become like the youngest, and the leader like one who serves. For who is greater, the one who is at the table or the one who serves? Is it not the one at the table? But I am among you as one who serves. “You are those who have stood by me in my trials; and I confer on you, just as my Father has conferred on me, a kingdom, so that you may eat and drink at my table in my kingdom, and you will sit on thrones judging the twelve tribes of Israel.

“Simon, Simon, listen! Satan has demanded to sift all of you like wheat, but I have prayed for you that your own faith may not fail; and you, when once you have turned back, strengthen your brothers.”

Պետրոս ըսաւ.

– Տէ՛ր, պատրաստ եմ քեզի հետ թէ՛ բանտ  
երթալու եւ թէ՛ մեռնելու:

Յիսուս ըսաւ.

– Պետրո՛ս, քեզի կ'ըսեմ՝ որ այսօր աքա-  
ղաղը չկանչած, երեք անգամ պիտի ուրանաս  
զիս՝ ըսելով որ զիս չես ճանչնար:

ԵՐԳ

Փրկեա զիս ի թըշնամեաց իմոց Ա՛ստը՛ւա՛ծ,  
եւ ի հալածչաց իմո՛ց ապրեցո՛ զի՛ս:

Երեք անգամ, վերջինը՝ ամբողջ ձայն մը բարձր:

ԵՐԳ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ

Խնամով սիրոյն յիւր սիրելեացն ըզտըրտ-  
մուծիւնըն փարատեաց. թացեալ պատառ՝ տայ  
Յուդայի՝ նըշաւակեալ զգողըն մատնիչ, զոր  
առեալ եւ մերկացաւ յաստուածային Հոգւոյն  
չնորհաց, մատնեցաւ նախաչարին ընդ մատ-  
նուծեան Վարդապետին:

Ծայրագոյն լուսոյն զըրկեալ խաւարասէրն  
արտաքս ելեալ, Տէրըն յայտնէր լոյս եղելոցն  
ըզգայթակղիլն ի գիշերի. Պետրոս խօսէր խրա-  
խուսելի եւ կըշտամբիւր հաւախօսի, զիւրն  
յաշխարհէ գիտիլն ասէր եւ ըզգալուստ Հոգւոյն  
պատմէր:

Կեղրոնեան յայնկոյս ձորոյ ի վերնատունն  
ել խորհրդոյ, եմուտ պարտեզ ընդ պարտիզի,  
եմոյծ յԱզամ յաղին դրախտին, մուծցես եւ զմեզ,  
Տէր, ընդ նըմին, ուստի հաներ նախ գառաջինն,  
զի ժառանգել ըզհայրենին արժանասցուք մեր  
վերըստին:

*Khnamov sirooyն hyoor sirélyatsն ûzdûrdmootyoonûն paradyats, tatsyal badar da Hootayi  
nûshavagyal zkoghûն madnich, zor aryal yév mérgatsav hasdvadzayin Hodvooyն shnorhats, mad-  
nétsav nakhacharin ûnt madnootyan Vartabédin.*  
*Dzayrakooyն loosooyն zûrgyal khavarasérն ardaks yélyal, Dérûն haydnér looyս yéghélotsն  
ûzkaytag-ghiln i kishéri, Bédros khosér khrakhooséli yév gûshdampyoor havakhosi, zyoorn hash-  
kharhé zpokhiln asér yév ûzkaloosd Hokvooyն badmér.*  
*Gétronyan hayngooyս tsoro i vérnadoonn yél khorhûrto, yémood bardéz ûnt bardizi yémooydz  
hAtam hatin trakhdin, moodztsés yév zméz Dér, ûnt númin, oosdi hanér nakh zarachinn, zi zharankél  
ûz-hayrénin arzhanastsook mék vérûsdin.*

And he said to him,

“Lord, I am ready to go with you to prison  
and to death!”

Jesus said,

“I tell you, Peter, the cock will not crow this  
day, until you have denied three times that you  
know me.”

HYMN

Deliver me from my enemies, O my God;  
and deliver me from my persecutors.

*Repeat thrice, the third time a tone higher.*

HYMN OF ST. NERSES THE GRACEFUL

With loving care he dispelled the sorrow of  
his beloved ones, by dipping the morsel and giving  
it to Judas pointing out the secret traitor and who  
took it and was stripped of the grace of the divine  
Spirit. By betraying the teacher, he surrendered  
himself to Satan.

Deprived of the supreme light, the lover of dark-  
ness went out. The Lord revealed to those who are to  
be light their stumbling at night . Peter began to speak  
presumptuously but was scolded by the crowing of  
the rooster; he spoke to them of his own departure  
from this world and of the coming of the Holy Spirit.

From the mystical Upper Room he went out and  
crossed the the Kidron Valley, and entered the garden,  
instead of the Garden, and he brought Adam into the  
Garden of Eden. Lord, with him lead us also there from  
where you first expelled the first man that we may be  
worthy to inherit paradise, our fatherland again.

ՍՐԿ. *Օրթի:*  
ՔՀՆ. *Խաղաղութիւն ամենեցուն:*  
ԴՊՐ. *Եւ ընդ հոգւոյդ քուս:*  
ՍՐԿ. *Երկիւղածութեամբ լուարուք:*  
ՔՀՆ. *Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի  
որ ըստ Մարկոսի (14:32–72):*  
ԴՊՐ. *Փառք քեզ, Տէր, Աստուած մեր:*  
ՍՐԿ. *Պոսխուսմէ:*  
ԴՊՐ. *Ասէ Աստուած:*  
ՔՀՆ. *Վասն մատնութեան Տեառն մերոյ Յիսու-  
սի Քրիստոսի:*

*Եկան տեղ մը, որ կը կոչուէր Գեթսեմանի:  
Յիսուս իր աշակերտներուն ըսաւ.*

*– Հո՛ս նստեցէք, մինչեւ որ ես աղօթեմ:*

*Եւ իր հետ առաւ Պետրոսը, Յակոբոսն ու  
Յովհաննէսը: Խռոված էր ու կը տագնապէր:  
Այն ատեն ըսաւ անոնց.*

*– Հոգիս մեռնելու աստիճան տրտմած է.  
Հո՛ս կեցէք եւ արթո՛ւն մնացէք:*

*Ապա քիչ մը առաջ գնաց եւ երեսին վրայ  
գետին փռուելով կ’աղօթէր, որ եթէ կարելի է՝  
հեռանայ իրմէ տառապանքի այս ժամը: Եւ ըսաւ. –  
Հա՛յր, Հա՛յր, քեզի համար ամէն ինչ կարելի է: Այս  
բաժակը հեռացո՛ւր ինձմէ, բայց ո՛չ թէ ինչպէս  
որ ես կ’ուզեմ, այլ ինչպէս որ դո՛ւն կ’ուզես:*

*Յետոյ եկաւ եւ տեսաւ որ երեք աշակերտ-  
ները կը քնանային: Պետրոսի ըսաւ.*

*– Սիմո՛ն, կը քնանա՞ս, չկըցա՞ր ժամ մը  
արթուն մնալ: Արթուն մնացէք եւ աղօթեցէ՛ք,  
որպէսզի փորձութեան մէջ չիյնաք: Հոգին  
յօժար կրնայ ըլլալ, բայց մարմինը տկար է:*

*Կրկին գնաց աղօթելու եւ նոյն խօսքերը  
ըսաւ: Եւ երբ վերադարձաւ՝ զանոնք քնացած  
գտաւ: Անոնց աչքերը չէին բացուեր եւ չէին  
գիտեր թէ ի՞նչ պատասխան տային անոր:*

*Երրորդ անգամ երբ Յիսուս դարձաւ, ըսաւ  
անոնց.*

*– Ասկէ ետք քնացէք եւ հանգստացէք:  
Բայց բաւակա՛ն է, ժամը հասաւ եւ ահա Մար-  
դու Որդին մեղաւոր մարդոց ձեռքը պիտի  
յանձնուի: Օ՛ն, ելէք երթա՛նք, որովհետեւ զիս  
մատնողը ահա մօտեցաւ:*

DCN. Rise.  
PRS. Peace be to all.  
CHR. And with your spirit.  
DCN. Listen in awe.  
PRS. To the holy Gospel of Jesus Christ accord-  
ing to Mark (14:32-72).  
CHR. Glory be to you, Lord, our God.  
DCN. Be attentive.  
CHR. God is speaking.  
PRS. On the betrayal of our Lord Jesus Christ.

*They went to a place called Gethsemane;  
and he said to his disciples,*

*“Sit here while I pray.”*

*He took with him Peter and James and John,  
and began to be distressed and agitated. And he  
said to them,*

*“I am deeply grieved, even to death; remain  
here, and keep awake.”*

*And going a little farther, he threw himself  
on the ground and prayed that, if it were possible,  
the hour might pass from him. He said, “Abba,  
Father, for you all things are possible; remove this  
cup from me; yet, not what I want, but what you  
want.”*

*He came and found them sleeping; and he  
said to Peter,*

*“Simon, are you asleep? Could you not  
keep awake one hour? Keep awake and pray that  
you may not come into the time of trial; the spirit  
indeed is willing, but the flesh is weak.”*

*And again he went away and prayed, say-  
ing the same words. And once more he came and  
found them sleeping, for their eyes were very  
heavy; and they did not know what to say to him.*

*He came a third time and said to them,*

*“Are you still sleeping and taking your rest?  
Enough! The hour has come; the Son of Man is  
betrayed into the hands of sinners. Get up, let us  
be going. See, my betrayer is at hand.”*

Տակաւին կը խօսէր, երբ տասներկու աշակերտներէն Յուդա Իսկարիոտացին եկաւ: Իրեն հետ էր սուրերով եւ բիրերով զինուած ամբոխ մը, որ զրկուած էր աւագ քահանաներուն, Օրէնքի ուսուցիչներուն եւ երէցներուն կողմէ: Մատնիչը անոնց նշան տուած էր՝ ըսելով.

– Ով որ համբուրեմ՝ անիկա՛ է Յիսուսը, ձերբակալեցէք զայն եւ զգուշութեամբ տարէք:

Յուդա անմիջապէս մօտեցաւ Յիսուսի եւ ըսաւ.

– Վարդապետ, Վարդապետ, – եւ համբուրեց զայն:

Ապա բռնեցին Յիսուսը եւ ձերբակալեցին: Իր շուրջը գտնուողներէն մէկը սուրը քաշեց եւ քահանայապետին ծառային զարկաւ, անոր ականջը կտրելով: Յիսուս ըսաւ անոնց.

– Աւագա՞կ եմ որ այդպէս սուրերով ու բիրերով եկեր էք ձերբակալելու զիս: Ամէն օր ձեզի հետ էի եւ կ'ուսուցանէի տաճարին մէջ ու չձերբակալեցիք զիս: Բայց այս բոլորը կը պատահին, որպէսզի Սուրբ գիրքերուն մէջ ըսուածները իրականանան:

Այն ատեն աշակերտները բոլորն ալ ձգեցին զինք ու փախան: Սակայն երիտասարդ մը, որ միայն կտաւով մը իր մերկութիւնը ծածկած էր, կը հետեւէր իրեն: Երիտասարդները զայն ալ բռնեցին, բայց անիկա կտաւը ձգեց եւ մերկ փախաւ անոնցմէ:

Յետոյ Յիսուսը տարին Կայիափա Քահանայապետին տունը, ուր բոլոր աւագ քահանաները, Օրէնքի ուսուցիչներն ու երէցները սկսած էին հաւաքուիլ: Պետրոս հեռուէն կը հետեւէր Յիսուսի, մինչեւ Քահանայապետին տան դաւիթը, ուր սպասաւորներուն հետ նստաւ կրակին մօտ՝ տաքնալու համար: Աւագ քահանաները եւ ամբողջ Ատենանը կը ջանային Յիսուսի դէմ վկայութիւն գտնել, որպէսզի զայն սպաննեն, բայց չէին գտներ: Շատ մը վկաներ սուտ վկայութիւն կու տային, սակայն վկայութիւնները իրարու համաձայն չէին: Ուրիշներ ելան եւ սուտ վկայութիւն տալով ըսին.

– Մենք իր բերնէն լսեցինք որ կ'ըսէր. «Ես մարդոց կողմէ ձեռքով կառուցուած այս տաճարը պիտի քանդեմ եւ երեք օրէն պիտի շինեմ ուրիշ մը, որ մարդոց կողմէ շինուած չէ»:

Immediately, while he was still speaking, Judas, one of the twelve, arrived; and with him there was a crowd with swords and clubs, from the chief priests, the scribes, and the elders. Now the betrayer had given them a sign, saying,

“The one I will kiss is the man; arrest him and lead him away under guard.”

So when he came, he went up to him at once and said,

“Rabbi!” and kissed him.

Then they laid hands on him and arrested him. But one of those who stood near drew his sword and struck the slave of the high priest, cutting off his ear. Then Jesus said to them,

“Have you come out with swords and clubs to arrest me as though I were a bandit? Day after day I was with you in the temple teaching, and you did not arrest me. But let the scriptures be fulfilled.”

All of them deserted him and fled. A certain young man was following him, wearing nothing but a linen cloth. They caught hold of him, but he left the linen cloth and ran off naked.

They took Jesus to the high priest; and all the chief priests, the elders, and the scribes were assembled. Peter had followed him at a distance, right into the courtyard of the high priest; and he was sitting with the guards, warming himself at the fire. Now the chief priests and the whole council were looking for testimony against Jesus to put him to death; but they found none. For many gave false testimony against him, and their testimony did not agree. Some stood up and gave false testimony against him, saying,

“We heard him say, “I will destroy this temple that is made with hands, and in three days I will build another, not made with hands.”

Սակայն ասոնց վկայութիւններն ալ իրարու չէին համապատասխաներ: Յետոյ Քահանայապետը ելաւ եւ մէջտեղ դալով հարցուց Յիսուսի.

– Քեզի դէմ եղած այս ամբաստանութիւններուն պատասխան մը պիտի չտա՞ս:

Բայց Յիսուս լուռ կը մնար եւ պատասխան չէր տար: Քահանայապետը դարձեալ հարցուց Յիսուսի.

– Դո՞ւն ես Քրիստոսը, օրհնեալ Աստուծոյ Որդին:

Յիսուս պատասխանեց անոր.

– Ես եմ: Եւ դուք պիտի տեսնէք Մարդու Որդին, ամենագոր Աստուծոյ աջ կողմը նստած, եւ պիտի տեսնէք՝ որ կու գայ երկինքի ամպերուն մէջէն:

Քահանայապետը անմիջապէս իր վերարկուն պատռեց եւ ըսաւ.

– Ալ ի՞նչ պէտք ունինք վկաներու, բոլորդ ալ իր իսկ բերնէն լսեցիք ըրած հայհոյութիւնը: Ի՞նչ կը մտածէք:

Բոլորը Յիսուսը դատապարտելով վճռեցին եւ ըսին. – Մահապարտ է:

Ոմանք սկսան թքնել Յիսուսի երեսին. դէմքը կը ծածկէին, կը զարնէին ու կը հարցնէին.

– Քրիստո՛ս, գիտցի՛ր, ո՞վ է քեզի զարնողը:

Եւ սպասաւորները կ'ապտակէին զինք:

Մինչ Պետրոս վարը՝ գաւիթին մէջ էր, Քահանայապետին աղախիններէն մէկը գալով՝ տեսաւ որ կը տաքնար, նայեցաւ անոր եւ ըսաւ.

– Դո՞ւն ալ Նագովրեցի Յիսուսի հետ էիր:

Պետրոս ուրացաւ, ըսելով.

– Չե՛մ ճանչնար զինք եւ չեմ գիտեր թէ ի՞նչ կ'ըսես:

Պետրոս հագիւ գաւիթէն դուրս՝ նախագաւիթ ելած էր, երբ աքաղաղը կանչեց: Աղախինը զինք կրկին տեսաւ եւ սկսաւ իր շուրջիներուն ըսել. – Ասիկա ալ անոնցմէ է:

Բայց Պետրոս դարձեալ ուրացաւ: Քիչ ետք շուրջիները կրկին ըսին Պետրոսի.

– Իրապէս որ դուն անոնցմէ ես, քանի Գալիլեացի ես եւ անոնց նման ալ կը խօսիս:

Պետրոս ինքզինք անիծելով սկսաւ երդում ընել եւ ըսել. – Չեր ըսած մարդը չե՛մ ճանչնար:

“But even on this point their testimony did not agree. Then the high priest stood up before them and asked Jesus,

“Have you no answer? What is it that they testify against you?”

But he was silent and did not answer. Again the high priest asked him,

“Are you the Messiah, the Son of the Blessed One?”

Jesus said,

“I am; and “you will see the Son of Man seated at the right hand of the Power”, and “coming with the clouds of heaven.”

Then the high priest tore his clothes and said,

“Why do we still need witnesses? You have heard his blasphemy! What is your decision?”

All of them condemned him as deserving death.

Some began to spit on him, to blindfold him, and to strike him, saying to him,

“Prophesy!”

The guards also took him over and beat him.

While Peter was below in the courtyard, one of the servant-girls of the high priest came by. When she saw Peter warming himself, she stared at him and said, “You also were with Jesus, the man from Nazareth.”

But he denied it, saying,

“I do not know or understand what you are talking about.”

And he went out into the forecourt. Then the cock crowed. And the servant-girl, on seeing him, began again to say to the bystanders, “This man is one of them.”

But again he denied it. Then after a little while the bystanders again said to Peter,

“Certainly you are one of them; for you are a Galilean.”

But he began to curse, and he swore an oath, “I do not know this man you are talking about.”

Նոյն պահուն աքաղաղը երկրորդ անգամ կանչեց: Պետրոս յիշեց Յիսուսի խօսքը որ իրեն ըսած էր, թէ «Աքաղաղը երկու անգամ չկանչած՝ երեք անգամ պիտի ուրանաս զիս»: Եւ սկսաւ լալ:

ԵՐԳ

Նոքա ի ձեռանէ քումմէ մե՛րժե՛ցա՜ն,  
մեք ժողովուրդք եւ խա՛շն արօտի՛ քո՛:

Երեք անգամ, վերջինը՝ ամբողջ ձայն մը բարձր:

ԵՐԳ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ

Ճառագայթ փառաց էին, որ ըստ բնու-  
թեանըս մարդկային տագնապեցար ի գիշերին,  
աղօթեցեր առ Հայր յերկինս, ծագեա ի մեզ  
զլոյսդ երկնային եւ փարատեա գերկիւղ չարին,  
մասունք հոգւոց մեր եւ մարմին յերկիւղ քո  
սուրբ բեւեռեսցին:

Մերձեալ Յուդաս, որ մատնելոց, հան-  
դերձ դասուն փարիսեցւոց, անկան նրման ստո-  
րանկելոցն, որք յաւիտեան չեն կանգնելոց. Յու-  
դաս նենգաւ համբուրելով՝ առիթ մահու նըշան  
տալով, փոխան սիրոյ զնա մատնելով, չար ընդ  
բարւոյ վրձարելով:

Յայնժամ առ գուլթ սիրոյն Պետրոս ըզծա-  
ռային՝ անուն Մաղքոս, եհատ սուսերբ զականջն  
աջոյ, որ ոչ լըւաւ Տեառըն իւրոյ, իսկ Տէրըն  
մեր արագապէս յունկըն մերձեալ բըժըշկապէս,  
առողջացոյց աստուածապէս, զոր ոչ տեսին կու-  
րացն հանդէս:

At that moment the cock crowed for the sec-  
ond time. Then Peter remembered that Jesus had  
said to him, “Before the cock crows twice, you  
will deny me three times.” And he broke down  
and wept.

HYMN

They are cut off from your hand;  
we are his people and the sheep of his pasture.

*Repeat thrice, the third time a tone higher.*

HYMN OF ST. NERSES THE GRACEFUL

You who are the glorious light of God at that  
night you were distressed according to our human  
nature and prayed to your Father in heaven. Shine  
on us your heavenly light and dispel the fear of  
the evil one. May every part of our soul and body  
be nailed by your holy fear.

Judas who was going to betray approached  
along with a crowd of Pharisees; they fell like  
those fallen angels who will never rise. He  
kissed deceitfully, giving the signal of death. In-  
stead of love, he betrayed him, by repaying evil  
for good.

Then Peter, out of compassionate love, with  
his sword cut off the right ear of the servant named  
Malchus, the ear that did not obey the Lord, but  
our Lord immediately touching the ear as a physi-  
cian and as God healed it, which the blind crowd  
did not see.

*Jarakayt parats Éyin, vor úsd pnootyanús martgayin daknabétsar i kishérin aghotétsir ar Hayr hégins, dzakya i méz zlooyst yérgnayin yév paradya zérgyoogh charin, masoonk hokvots mér yév marmin hérgyoogh ko soorp pévérestsin.*  
*Mértsyal Hootas vor madnélots, hantérts tason parisétsvots, angan nûman sdorangélotsn vork havidyan chén ganknélots, Hootas nénkav hampoorélov arit mahoo nûshan dalov, pokhan siro zna madnélov char ûnt parvo vûjarélov.*  
*Haynzham ar koot sirooyñ Bédros údzarayin anoon Maghkos, yéhad soosérp zaganchn acho vor voch lûvav Dyarûn yooro, isg Dérûn mér arakabés hoongûn mértsyal pûzhûshgabés, aroghchat-sooyts asdvadzabés zor voch désin gooratsn hantés.*

- ՍՐԿ. Օրթի:
- ՔՀՆ. Խաղաղութիւն ամենեցուն:
- ԴՊՐ. Եւ ընդ հոգւոյդ քում:
- ՍՐԿ. Երկիւղածութեամբ լուարուք:

- DCN. Rise.
- PRS. Peace be to all.
- CHR. And with your spirit.
- DCN. Listen in awe.

ՔՀՆ. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի (26.31-56):

ԴՊՐ. Փառք քեզ, Տէր, Աստուած մեր:

ՍՐԿ. Պոսխումէ:

ԴՊՐ. Ասէ Աստուած:

ՔՀՆ. Վասն մատնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Հոն Յիսուս ըսաւ անոնց.

– Այս գիշեր դուք բոլորդ ալ պիտի լքէք զիս, որովհետեւ Սուրբ գիրքը կ'ըսէ. «Պիտի սպաննեմ հովիւը, եւ հօտին ոչխարները պիտի ցրուին»: Բայց յարութիւն առնելէս ետք՝ ձեզմէ առաջ Գալիլեա պիտի երթամ:

Պետրոս պատասխանեց.

– Նոյնիսկ եթէ բոլորը լքեն քեզ, ես պիտի չլքեմ:

Յիսուս ըսաւ անոր.

– Կ'ըսեմ քեզի, որ այս գիշեր աքաղաղը չկանչած՝ դուն երեք անգամ պիտի ուրանաս զիս:

Պետրոս ըսաւ.

– Նոյնիսկ եթէ մեռնիլ պէտք ըլլայ քեզի համար, քեզ պիտի չուրանամ:

Նոյնը կ'ըսէին բոլոր աշակերտներն ալ:

Ապա Յիսուս իր աշակերտներուն հետ եկաւ տեղ մը, որուն անունը Գեթսեմանի էր, եւ ըսաւ անոնց.

– Հոս նստեցէք, մինչեւ որ ես երթամ աղօթեմ:

Եւ իր հետ առաւ Պետրոսը եւ Զեբեդէոսի երկու որդիները: Տրտում էր ու կը տագնապէր: Այն ատեն ըսաւ անոնց.

– Հոգիս մեռնելու աստիճան տրտում է.

հոս կեցէք եւ ինծի հետ արթուն մնացէք:

Ապա քիչ մը առաջ գնաց եւ երեսին վրայ գետին փռուելով աղօթեց, ըսելով.

– Հա՛յր իմ, եթէ կարելի է, այս բաժակը հեռացուր ինձմէ, բայց ո՛չ թէ ինչպէս որ ես կ'ուզեմ, այլ ինչպէս որ դուն կ'ուզես:

Յետոյ վերադարձաւ երեք աշակերտներուն մօտ եւ գանոնք քնացած գտաւ: Պետրոսի ըսաւ.

– Չկրցա՞ք ժամ մը արթուն մնալ ինծի հետ: Արթուն մնացէք եւ աղօթեցէք, որպէսզի փորձութեան մէջ չիյնաք: Հոգին յօժար կրնայ ըլլալ, բայց մարմինը տկար է:

PRS. To the holy Gospel of Jesus Christ according to Matthew (26:31-56).

CHR. Glory be to you, Lord, our God.

DCN. Be attentive.

CHR. God is speaking.

PRS. On the betrayal of our Lord Jesus Christ.

Then Jesus said to them,

“You will all become deserters because of me this night; for it is written, “I will strike the shepherd, and the sheep of the flock will be scattered.” But after I am raised up, I will go ahead of you to Galilee.”

Peter said to him,

“Though all become deserters because of you, I will never desert you.”

Jesus said to him,

“Truly I tell you, this very night, before the cock crows, you will deny me three times.”

Peter said to him,

“Even though I must die with you, I will not deny you.”

And so said all the disciples.

Then Jesus went with them to a place called Gethsemane; and he said to his disciples,

“Sit here while I go over there and pray.”

He took with him Peter and the two sons of Zebedee, and began to be grieved and agitated. Then he said to them,

“I am deeply grieved, even to death; remain here, and stay awake with me.”

And going a little farther, he threw himself on the ground and prayed,

“My Father, if it is possible, let this cup pass from me; yet not what I want but what you want.”

Then he came to the disciples and found them sleeping; and he said to Peter,

“So, could you not stay awake with me one hour? Stay awake and pray that you may not come into the time of trial; the spirit indeed is willing, but the flesh is weak.”

Կրկին, երկրորդ անգամ ըլլալով, Յիսուս գնաց աղօթելու եւ ըսաւ.

– Հա՛յր իմ, եթէ կարելի է՝ այս բաժակը թող հեռանայ ինձմէ, ապա թէ ոչ՝ պիտի խմեմ զայն. քու կամքդ թող ըլլայ:

Վերադարձաւ եւ դարձեալ իր աշակերտները քնացած գտաւ. անոնց աչքերը չէին բացուեր: Յիսուս դարձեալ ձգեց զիրենք ու գնաց եւ երրորդ անգամ աղօթեց՝ նոյն խօսքերը ըսելով: Ապա վերադարձաւ իր աշակերտներուն մօտ եւ ըսաւ.

– Ասկէ ետք քնացէք եւ հանգստացէք. բայց ահա ժամը հասած է եւ Մարդու Որդին մեղաւոր մարդոց ձեռքը պիտի յանձնուի: Ելէք երթանք այստեղէն, որովհետեւ զիս մատնողը ահաւասիկ հասաւ:

Տակաւին կը խօսէր, երբ ահա եկաւ Յուդան՝ տասներկու աշակերտներէն մէկը: Իրեն հետ էր սուրերով եւ բիրերով զինուած մեծ ամբօխ մը՝ աւագ քահանաներուն եւ ժողովուրդի երէցներուն կողմէ զրկուած: Յիսուսը մատնողը անոնց նշան տուած էր, ըսելով.

– Ով որ համբուրեմ՝ անիկա է Յիսուսը, ձերբակալեցէ՛ք զայն:

Յուդա շուտով մօտեցաւ Յիսուսի եւ ըսաւ.

– Ողջո՛յն, Վարդապե՛տ,– եւ համբուրեց զայն:

Յիսուս ըսաւ անոր.

– Բարեկա՛մ, ասոր համա՞ր եկար:

Ապա մօտեցան, բռնեցին Յիսուսը եւ ձերբակալեցին: Եւ ահա Յիսուսի հետ եղողներէն մէկը ձեռքը երկարեց եւ սուրը քաշելով՝ զարկաւ Քահանայապետին ծառային եւ անոր ականջը կտրեց: Յիսուս ըսաւ անոր.

– Սուրդ տեղը դիր, որովհետեւ ո՛վ որ սուր կ'առնէ՝ սուրով պիտի մեռնի: Կը կարծես թէ չե՞մ կրնար Հօրս աղաչել, որ հիմա աւելի քան տասներկու զուռը հրեշտակ զրկէ ինձի: Սակայն ինչպէ՞ս պիտի իրականանան Սուրբ գիրքերուն մէջ գրուածները, թէ այսպէս պէտք է ըլլայ:

Ապա Յիսուս ամբօխին դառնալով ըսաւ.

– Աւագա՞նկ եմ որ այդպէս սուրերով եւ բիրերով վրաս կը յարձակիք՝ զիս ձերբակալելու համար: Ամէն օր ձեզի հետ տաճարին մէջ կը նստէի եւ կ'ուսուցանէի, ու չձերբակալեցիք զիս: Բայց այս բոլոր կը պատահին, որպէսզի Սուրբ գիրքերուն մէջ մարգարէներուն ըսածները իրականանան:

Again he went away for the second time and prayed,

“My Father, if this cannot pass unless I drink it, your will be done.”

Again he came and found them sleeping, for their eyes were heavy. So leaving them again, he went away and prayed for the third time, saying the same words. Then he came to the disciples and said to them,

“Are you still sleeping and taking your rest? See, the hour is at hand, and the Son of Man is betrayed into the hands of sinners. Get up, let us be going. See, my betrayer is at hand.”

While he was still speaking, Judas, one of the twelve, arrived; with him was a large crowd with swords and clubs, from the chief priests and the elders of the people. Now the betrayer had given them a sign, saying,

“The one I will kiss is the man; arrest him.”

At once he came up to Jesus and said, “Greetings, Rabbi!” and kissed him.

Jesus said to him,

“Friend, do what you are here to do.”

Then they came and laid hands on Jesus and arrested him. Suddenly, one of those with Jesus put his hand on his sword, drew it, and struck the slave of the high priest, cutting off his ear. Then Jesus said to him,

“Put your sword back into its place; for all who take the sword will perish by the sword. Do you think that I cannot appeal to my Father, and he will at once send me more than twelve legions of angels? But how then would the scriptures be fulfilled, which say it must happen in this way?”

At that hour Jesus said to the crowds,

“Have you come out with swords and clubs to arrest me as though I were a bandit? Day after day I sat in the temple teaching, and you did not arrest me. But all this has taken place, so that the scriptures of the prophets may be fulfilled.”

Այն ատեն աշակերտները բոլորն ալ ձգեցին զինք ու փախան:

ԵՐԳ

Խօսեցան զինէն լեզուաւ նենգա՛ւո՛րա՛ւ, եւ բանիւ ատելութեա՛ն զիս պաշարեցի՛ն:

Երեք անգամ, վերջինը՝ ամբողջ ձայն մը բարձր:

ԵՐԳ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ

Չար կապանաց մարդկան լուծիչ, որ կապեցար ընդ կապելոյն, զիս արձակեա յինքնակապէս մեղաց կապից դըժոխայնոյն, որ ընդ մեղօք պարտաւորին կացեր անմեղդ ի յատենի, յորժամ փառօք դաս հայրենի, մի՛ դատեսցես զիս ընդ նոսին:

Պատկառանք հինն Ադամայ, որ ձաղեցար վասըն նորա, ջրնջեա զամօթ մեղաց լըրբին, որով գերեսս իմ ծածկեցին, որ ներեցեր չար ծառային՝ ածել ձեռօք քեզ ապտակին, հար ուժգնակի զդէմըս չարին, որպէս եւ զիս եհար ուժգին:

Ջահըն լուսոյ յառաւօտին ի յուրբաթուն հընոյ զատկին կայր առաջի դատաւորին, ծառայն նըստէր ի յատենին. ի հարցանել Պիղատոսի Տէրն ոչ առնէր պատասխանի, զի կանխասաց զիրըն լըցցի՝ Եղէ ես մարդ, որ ոչ խօսի:

Then all the disciples deserted him and fled.

HYMN

Speaking against me with lying tongues. They beset me with words of hate.

*Repeat thrice, the third time a tone higher:*

HYMN OF ST. NERSES THE GRACEFUL

You who loose mankind of their evil bonds, you were bound instead of those who bound you. Release me from my self-bound hellish bonds of sin. O sinless one, you stood in the court for the sinners; when you come with the glory of the Father, do not judge me with them.

You were mocked because of the shame of the first Adam. Erase the sinful shame of the shameless, with which my face has been covered. You forgave the wicked servant who slapped you on the face. Strike a mighty blow at the face of the evil one, who has struck me strong.

The radiant light, on Friday morning of the old Passover, stood before the judge, the servant sitting on the tribunal. When Pilate questioned, the Lord did not answer so that the foretold scripture may be fulfilled – I have become a man who speaks not.

*Char gabanats martgan loodzich, vor gabétsar ûnt gabélooy, zis artsagya hinknagabés méghats gabits túzhokhaynooy, vor ûnt méghok bardavorin gatsér anméght i hadéni, horzham parok kas hayréni mi tadéstsés zis ûnt nosin.*

*Badgaranok hinn Atama, vor tsaghétsar vasûn nora, chûnchya zamot méghats lûrpin, vorov zéréss im dzadzgétsin, vor nérétsér char dzarayin adzél tsérok kéz abdagin, har oozhknagi ztémús charin, vorbés yév zis yéhar oozhkin.*

*Chahûn looso haravodin i hoorpatoon hûno zadgin, gayr arachi tadavorin dzarayn nûsdér i hadénin, i hartsanéł Bighadosi Dérn voch arnér badaskhani, zi gankhasats kirûn lûts-tsi, yéghé yés mart vor voch khosi.*

ՄՐԿ. Օրթի:

ՔՀՆ. Խաղաղութիւն ամենեցուն:

ԴՊՐ. Եւ ընդ հոգւոյդ քում:

ՄՐԿ. Երկիւղածութեամբ լուարուք:

ՔՀՆ. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի (26.57–75):

DCN. Rise.

PRS. Peace be to all.

CHR. And with your spirit.

DCN. Listen in awe.

PRS. To the holy Gospel of Jesus Christ according to Matthew (26:57-75).

ԴՊՐ. *Փառք քեզ, Տէր, Աստուած մեր:*

ՍՐԿ. *Պռօսխումէ:*

ԴՊՐ. *Ասէ Աստուած:*

ՔՀՆ. *Տէրն մեր Յիսուս Քրիստոս:*

*Անոնք ձերբակալեցին Յիսուսը եւ տարին Կայիափա Քաճանայապետին տունը, ուր Օրէնքի ուսուցիչները եւ երէցները հաւաքուած էին: Պետրոս հեռուէն կը հետեւէր Յիսուսի, մինչեւ Քաճանայապետին տան գաւիթը, ուր մտնելով նստաւ սպասաւորներուն հետ՝ տեսնելու համար թէ վերջը ի՞նչ պիտի ըլլայ: Մինչ այդ, աւագ քաճանաները եւ ամբողջ Ատեանը կը ջանային Յիսուսի դէմ սուտ վկայութիւն գտնել, որպէսզի զայն սպաննեն: Բայց չգտան, հակառակ անոր որ շատ մը սուտ վկաներ ալ եկան: Ի վերջոյ՝ երկու սուտ վկաներ եկան եւ ըսին.*

*– Այս մարդը կ’ըսէր. «Ես կրնամ Աստուծոյ տաճարը քանդել եւ երեք օրէն շինել զայն»:*

*Քաճանայապետը ոտքի ելաւ եւ հարցոյց Յիսուսի.*

*– Քեզի դէմ եղած այս ամբաստանութիւններուն պատասխան մը պիտի չտա՞ս:*

*Բայց Յիսուս լուռ կը մնար: Քաճանայապետը դարձեալ հարցոյց Յիսուսի.*

*– Կենդանի Աստուծոյ անունով՝ ըսէ՛ մեզի թէ դո՞ւն ես Քրիստոսը, Աստուծոյ Որդին:*

*Յիսուս պատասխանեց.*

*– Դո՛ւն կ’ըսես: Բայց կ’ըսեմ ձեզի. – Ասկէ ետք պիտի տեսնէք Մարդու Որդին՝ ամենազօր Աստուծոյ աջ կողմը նստած. եւ պիտի տեսնէք որ կու գայ երկինքի ամպերուն մէջէն:*

*Ասոր վրայ Քաճանայապետը իր վերարկուն պատռեց եւ ըսաւ.*

*– Հայհոյեց. ալ ի՞նչ պէտք ունինք վկաներու. ահա հիմա լսեցիք ըրած հայհոյութիւնը: Ի՞նչ կը մտածէք:*

*Անոնք պատասխանեցին.*

*– Մահապարտ է:*

*Ապա սկսան թքնել անոր երեսին եւ ծեծեցին զայն. ոմանք կ’ապտակէին զինք ու կը հարցնէին.*

*– Քրիստո՞ս, զիտցի՛ր, ո՞վ է քեզի զարնողը:*

CHR. Glory be to you, Lord, our God.

DCN. Be attentive.

CHR. God is speaking.

PRS. Our Lord Jesus Christ.

Those who had arrested Jesus took him to Caiaphas the high priest, in whose house the scribes and the elders had gathered. But Peter was following him at a distance, as far as the courtyard of the high priest; and going inside, he sat with the guards in order to see how this would end. Now the chief priests and the whole council were looking for false testimony against Jesus so that they might put him to death, but they found none, though many false witnesses came forward. At last two came forward and said,

“This fellow said, ‘I am able to destroy the temple of God and to build it in three days.’”

The high priest stood up and said,

“Have you no answer? What is it that they testify against you?”

But Jesus was silent. Then the high priest said to him,

“I put you under oath before the living God, tell us if you are the Messiah, the Son of God.”

Jesus said to him,

“You have said so. But I tell you, from now on you will see the Son of Man seated at the right hand of Power and coming on the clouds of heaven.”

Then the high priest tore his clothes and said,

“He has blasphemed! Why do we still need witnesses? You have now heard his blasphemy. What is your verdict?”

They answered,

“He deserves death.”

Then they spat in his face and struck him; and some slapped him, saying,

“Prophecy to us, you Messiah! Who is it that struck you?”

Մինչ Պետրոս դուրսը գաւիթին մէջ նստած էր, աղախին մը մօտեցաւ եւ ըսաւ.

- Դո՛ւն ալ Գալիլեացի Յիսուսին հետ էիր:

Պետրոս բոլորին դիմաց ուրացաւ եւ ըսաւ.

- Չեմ գիտեր թէ ի՛նչ բանի մասին կը խօսիս: Երբ գաւիթէն դուրս կ'եկէր, դրան առջեւ ուրիշ կին մը տեսաւ զինք եւ հոն եղողներուն ըսաւ.

- Ասիկա ալ Նազովրեցի Յիսուսի հետ էր:

Պետրոս դարձեալ ուրացաւ եւ ըսաւ.

- Կ'երդնում որ չեմ ճանչնար այդ մարդը:

Քիչ ետք հոն գտնուողները մօտեցան եւ ըսին Պետրոսի.

- Իրապէս որ դուն ալ անոնցմէ ես, քանի խօսակցութեանդ շեշտը քեզ կը մատնէ:

Պետրոս ինքզինք անիծելով՝ սկսաւ երդում ընել եւ ըսել.

- Այդ մարդը չեմ ճանչնար:

Եւ նոյն պահուն աքաղաղը կանչեց: Պետրոս յիշեց Յիսուսի խօսքը, թէ «Տակաւին աքաղաղը չկանչած՝ երեք անգամ պիտի ուրանաս զիս»: Եւ դուրս ելլելով՝ լացաւ դառնագին:

ԵՐԳ

Խոստովան եղերուք Տեառըն, զի բա՛րի՛ է՛,  
զի յաւիտեան է ո՛ղորմութիւն նորա՛:

Երեք անգամ, վերջինը՝ ամբողջ ձայն մը բարձր:

ԵՐԳ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ

Տարածեալ ձեռք ընդ ձեռաց, ոտք ընդ ոտից ընթանալեաց, փայտ ընդ փայտի դառըն պըտողոյ կեանք ընդ մահու փոխարկելով, ի մէջ երկուց անօրինաց կայր մերկացեալ տուողն օրինաց, զոր ոչ տեսին ազգըն կուրաց, բաց ի միոյն յաւազակաց:

Բոպէից արեգականն ըզտիւն արար զիշերանման, զըստուերըն քօղ արկ մերկութեան, զի մի՛ տեսցէ ակն անարժան, ի միջօրեայն նըսեմացաւ, յորժամ Ադամ մեղօք մեռաւ, ի յիններորդն ի լոյս դարձաւ, յորժամ մահուամբ մահըն լուծաւ:

Յօղէր արտօսըր ցաւագին մայր Տեառն, որ կայր մերձ առ խաչին, յորժամ լըսէր ըզծարաւին բարբառելոյ իւր միածնին. ետուն քացախ խառնեալ լեղի այնմ որ բրդխեաց գետ յաղենի եւ ի վիմէն վըտակ բարի արբոյց տոհմին դառնացողի:

Now Peter was sitting outside in the courtyard. A servant-girl came to him and said,

“You also were with Jesus the Galilean.”

But he denied it before all of them, saying, “I do not know what you are talking about.”

When he went out to the porch, another servant-girl saw him, and she said to the bystanders,

“This man was with Jesus of Nazareth.”

Again he denied it with an oath,

“I do not know the man.”

After a little while the bystanders came up and said to Peter,

“Certainly you are also one of them, for your accent betrays you.”

Then he began to curse, and he swore an oath,

“I do not know the man!”

At that moment the cock crowed. Then Peter remembered what Jesus had said: “Before the cock crows, you will deny me three times.” And he went out and wept bitterly.

HYMN

O give thanks to the Lord, for he is good;  
his steadfast love endures for ever!

*Repeat thrice, the third time a tone higher.*

HYMN OF ST. NERSES THE GRACEFUL

Stretched out his hands instead of the hands and his feet instead of the feet; he exchanged the wood of the cross for the tree of the bitter fruit, transforming death to life. In the middle of two lawless, the giver of the law nailed naked, whom the blind people did not see, except one of the thieves.

The sun’s light was made like night over the whole earth; the shadow was thrown as a covering for his nakedness so that unworthy eyes may not see him. At noon the sun darkened at the hour when Adam died because of sin. At the ninth hour it turned back to light at the time when death was destroyed by his death.

The mother of the Lord who was standing near the cross shed tears of sorrow when she heard her only begotten son saying that he is thirsty. They gave bitter vinegar to him who made the river flow in Eden and who gave the rebellious generation the water flowing from the rock to drink.

*Daradzyal tsérk ûnt tsérats, vodk ûnt vodits ûntanalyats, payd ûnt paydi tarûn bûdgho gyank ûnt mahoo pokhargélov, i méch yérgoots anorinats gayr mérgatsyal voghn orinats, zor voch désin azkûn goorats pats i miyooyyn havazagats.*

*Robéyits arékagann ûzdivn arar kishéranman, zûsdvérûn kogh arg mérgootyan zi mi déstésé agn anarzhan, i michoryayn nûsémathsav horzham Atam méghok mérav, i hinnérortn i looys tartsav horzham mahvamp mahûn loodzav.*

*Tsoghér ardosûr tsavakin mayr Dyarn vor gayr mérts ar khachin, horzham lûsér ûzdzaravin parparélo yoor miadznin, yédoon katsakh kharnyal léghi aynm vor pûkhyats kéd haténi, yév i vimén vûdag pari arpooyts dohmin tarnatsoghi.*

**Այս Աւետարանը բեմէն կը կարդացուի:**

ՍՐԿ. *Օրթի:*

ՔՀՆ. *Խաղաղութիւն ամենեցուն:*

ԴՊՐ. *Եւ ընդ հոգւոյդ քում:*

ՍՐԿ. *Երկիրդածութեամբ լուարուք:*

ՔՀՆ. *Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու (18:2-27):*

ԴՊՐ. *Փառք քեզ, Տէր, Աստուած մեր:*

ՍՐԿ. *Պօսխումէ:*

ԴՊՐ. *Ասէ Աստուած:*

ՔՀՆ. *Վասն Մատնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:*

*Յուդան՝ մատնիչը, գիտէր պարտէզին տեղը, որովհետեւ շատ անգամ Յիսուս եւ իր աշակերտները հոն կը հաւաքուէին: Ուստի, Յուդա իր հետ առնելով զինուորներու գունդ մը եւ աւագ քահանաներուն ու Փարիսեցիներուն կողմէ զրկուած սպասաւորները, եկաւ պարտէզ: Անոնք զինուած էին եւ ունէին ջահեր եւ լապտերներ: Յիսուս տեսնելով բոլոր մարդիկը, որոնք իր վրայ կու գային, առաջ անցնելով ըսաւ.*

*– Ո՞վ կը փնտռէք:*

*– Նազովրեցի Յիսուսը, – պատասխանեցին անոնք:*

*Յիսուս ըսաւ.*

*– Ես եմ:*

*Յուդան՝ մատնիչը, անոնց հետ հոն կեցած էր: Երբ Յիսուս «Ես եմ» ըսաւ, անոնք ետ-ետ քաշուեցան եւ գետին ինկան: Յիսուս դարձեալ հարցուց անոնց.*

*– Ո՞վ կը փնտռէք:*

*– Նազովրեցի Յիսուսը, – պատասխանեցին անոնք:*

*This Gospel is read from the bema.*

DCN. Rise.

PRS. Peace be to all.

CHR. And with your spirit.

DCN. Listen in awe.

PRS. To the holy Gospel of Jesus Christ according to John (18:2-27).

CHR. Glory be to you, Lord, our God.

DCN. Be attentive.

CHR. God is speaking.

PRS. On the betrayal of our Lord Jesus Christ.

Now Judas, who betrayed him, also knew the place, because Jesus often met there with his disciples. So Judas brought a detachment of soldiers together with police from the chief priests and the Pharisees, and they came there with lanterns and torches and weapons. Then Jesus, knowing all that was to happen to him, came forward and asked them,

“For whom are you looking?”

They answered, “Jesus of Nazareth.”

Jesus replied,

“I am he.”

Judas, who betrayed him, was standing with them. When Jesus said to them, “I am he”, they stepped back and fell to the ground. Again he asked them,

“For whom are you looking?”

And they said, “Jesus of Nazareth.”

Յիսուս ըսաւ.

– Ձեզի ըսի թէ ե՛ս եմ. արդ, եթէ զիս կը փնտուէք՝ ձգեցէք որ ասոնք երթան:

Այս ձեռով կ'իրականանար՝ ինչ որ Յիսուս նախապէս ըսած էր. «Պիտի չկորսնցնեմ ո՛չ իսկ մէկը անոնցմէ որ ինծի տուիր»:

Այն ատեն Սիմոն Պետրոս, որ սուր մը ունէր, քաշեց սուրը եւ զարկաւ Քահանայապետին ծառային՝ կտրելով անոր աջ ականջը: Ծառային անունը Մաղքոս էր: Յիսուս ըսաւ Պետրոսի.

– Սուրդ իր պատեանը դիր. տառապանքի բաժակը, որ Հայրս տուաւ ինծի, պիտի չխմե՞մ կը կարծես:

Ապա զինուորները, հազարապետը եւ Հրեայ ղեկավարներուն սպասաւորները բռնեցին Յիսուսը եւ կապեցին ու նախ տարին Հաննայի մօտ, որ այդ տարուան Քահանայապետին՝ Կայիափայի աներն էր: Ասիկա այն Կայիափան էր, որ Հրեայ ղեկավարներուն խորհուրդ տուած էր՝ ըսելով, թէ աւելի լաւ է որ մէկ հոգի մեռնի ժողովուրդին համար:

Սիմոն Պետրոս եւ ուրիշ աշակերտ մը կ'երթային Յիսուսի ետեւէն: Այս աշակերտը ծանօթ ըլլալով Քահանայապետին՝ Յիսուսի հետ Քահանայապետին տան դաւիթը մտաւ, մինչ Պետրոս դուրսը՝ դռան քով կեցաւ: Միւս աշակերտը, որ ծանօթ էր Քահանայապետին, դուրս ելաւ եւ խօսելէ ետք դռնապանին հետ, որ կին մըն էր, ներս առաւ Պետրոսը: Դռնապան աղախինը հարցուց Պետրոսի.

– Արդեօք դուն ալ այդ մարդուն աշակերտներէն չե՞ս:

– Ո՛չ, – պատասխանեց Պետրոս:

Օդը ցուրտ ըլլալուն, ծառաները եւ սպասաւորները կրակ վառած էին հոն ու կը տաքնային: Պետրոս ալ անոնց քով կեցած էր ու կը տաքնար:

Քահանայապետը հարցումներ ըրաւ Յիսուսի՝ անոր աշակերտներուն եւ ուսուցումներուն մասին: Յիսուս պատասխանեց.

– Ես հրապարակաւ խօսեցայ բոլորին, ամէն ատեն սորվեցուցի ժողովարաններու եւ տաճարին մէջ, ուր բոլոր Հրեաները կը հաւաքուէին. ես զաղտնի բան բնաւ չեմ խօսած: Ինչո՞ւ կը հարցնես

Jesus answered,

“I told you that I am he. So if you are looking for me, let these men go.”

This was to fulfil the word that he had spoken, “I did not lose a single one of those whom you gave me.”

Then Simon Peter, who had a sword, drew it, struck the high priest’s slave, and cut off his right ear. The slave’s name was Malchus. Jesus said to Peter,

“Put your sword back into its sheath. Am I not to drink the cup that the Father has given me?”

So the soldiers, their officer, and the Jewish police arrested Jesus and bound him. First they took him to Annas, who was the father-in-law of Caiaphas, the high priest that year. Caiaphas was the one who had advised the Jews that it was better to have one person die for the people.

Simon Peter and another disciple followed Jesus. Since that disciple was known to the high priest, he went with Jesus into the courtyard of the high priest, but Peter was standing outside at the gate. So the other disciple, who was known to the high priest, went out, spoke to the woman who guarded the gate, and brought Peter in. The woman said to Peter,

“You are not also one of this man’s disciples, are you?”

He said, “I am not.”

Now the slaves and the police had made a charcoal fire because it was cold, and they were standing round it and warming themselves. Peter also was standing with them and warming himself.

Then the high priest questioned Jesus about his disciples and about his teaching. Jesus answered,

“I have spoken openly to the world; I have always taught in synagogues and in the temple, where all the Jews come together. I have said nothing in secret. Why do you ask me? Ask those

ինծի, Հարցուր անոնց՝ որոնք լսեցին թէ ինչ ըսի իրենց. ահա անոնք գիտեն թէ ինչ խօսած եմ:

Յիսուս Հագիւ այս խօսքերը ըսած՝ սպասաւորներէն մէկը, որ Հոն կեցած էր, ապտակ մը զարկաւ Յիսուսի, ըսելով.

– Այդպէ՞ս կը պատասխանես Քահանայապետին:

Յիսուս ըսաւ անոր.

– Եթէ սխալ բան մը խօսեցայ՝ ցոյց տուր սխալը. իսկ եթէ շիտակ է ըսածս՝ ինչո՞ւ կը զարնես ինծի:

Յետոյ Հաննա՝ Յիսուսը կապուած վիճակով դրկեց Կայիափա Քահանայապետին:

Մինչ Սիմոն Պետրոս Հոն կեցած էր ու կը տաքնար, Հարցուցին իրեն.

– Արդեօք դուն ալ անոր աշակերտներէն չե՞ս:

Անիկա ուրացաւ եւ պատասխանեց.

– Ո՛չ:

Քահանայապետին ծառաներէն մէկը, ազգականը անոր՝ որուն ականջը Պետրոս կտրած էր, ըսաւ.

– Ես քեզ չտեսա՞յ Հոն՝ պարտէզին մէջ, անոր հետ:

Պետրոս դարձեալ ուրացաւ. եւ իսկոյն աքաղաղը կանչեց:

who heard what I said to them; they know what I said.”

When he had said this, one of the police standing nearby struck Jesus on the face, saying,

“Is that how you answer the high priest?”

Jesus answered,

“If I have spoken wrongly, testify to the wrong. But if I have spoken rightly, why do you strike me?”

Then Annas sent him bound to Caiaphas the high priest.

Now Simon Peter was standing and warming himself. They asked him,

“You are not also one of his disciples, are you?”

He denied it and said,

“I am not.”

One of the slaves of the high priest, a relative of the man whose ear Peter had cut off, asked,

“Did I not see you in the garden with him?”

Again Peter denied it, and at that moment the cock crowed.

ՄԱՂԹԱՆՔ

ՔՀՆ. Հոգւոցն Հանգուցելոց, Քրիստոս Աստուած, արա Հանգիստ եւ ողորմութիւն, եւ մեզ՝ մեղաւորացս, շնորհեա զթողութիւն յանցանաց:

SUPPLICATIONS

PRS. O Christ God, grant rest and mercy to the souls of those who are at rest; and to us, sinners, grant forgiveness of our transgressions.

ՔԱՐՈԶ

ՍՐԿ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Վասն Հանգուցեալ Հոգւոցն աղաչեսցուք զփրկիչն մեր Քրիստոս, զի զնոսա ընդ արդարսն դասեսցէ եւ զմեզ կեցուցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո եւ ողորմեա:

EXHORTATION

DCN. Again let us beseech the Lord.

For the souls who are at rest, let us beseech Christ our Savior, that he may rank them with the righteous and save us by his mercy. Almighty Lord, our God, save us and have mercy upon us.

ՔՀՆ. Տէր, ողորմեա, Տէր, ողորմեա, Տէր, ողորմեա:

CLB. Lord, have mercy, Lord, have mercy, Lord, have mercy.

Քրիստոս, Որդի Աստուծոյ, անոխակալ եւ բարեգութ, գլթա քո արարչական սիրովդ ի Հոգիս Հանգուցեալ ծառայից քոց: Յիշեալ յաւուր մեծի գալստեան արքայութեան քո, արա արժանի ողորմութեան, քաւութեան եւ թողութեան մեղաց, դասաւորեալ պայծառացո ընդ սուրբս քո յաջակողմեան դասուն: Զի դու ես Տէր եւ արարիչ ամենեցուն, դատաւոր կենդանեաց եւ մեռելոց, եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

O Christ, Son of God, forbearing and compassionate, have mercy through your love as Creator upon the souls of your servants who are at rest. Remember them on the great day when you come with your kingdom. Make them worthy of mercy, expiation, and forgiveness of sins. Rank and glorify them among the saints at your right hand, for you are Lord and the Creator of all, the judge of the living and of the dead. And to you is befitting glory, dominion, and honor, now and always and forever and ever. Amen.

ԿԱՆՈՆԱԳԼՈՒԽ — Սղ 119(118)-161-171

PSALM 119:161-171

Իշխանք Հալածեցին զիս ի նանիր, ալելուիա. եւ ի բանից քոց երկեալ սիրտ իմ. ալելուիա, ալելուիա:

Princes persecute me without cause; Alleluia! But my heart stands in awe of your words. Alleluia! Alleluia!

Յընծացայ ես ի բանքս քո, որպէս այն որ գըտանէ աւար բազում. ալելուիա, ալելուիա:

I rejoice at your word like one who finds great spoil. Alleluia! Alleluia!

Ըզմեղս ատեցի եւ անարգեցի, եւ զօրէնքս քո սիրեցի. ալելուիա, ալելուիա:

I hate and abhor falsehood, but I love your law. Alleluia! Alleluia!

ՓՈՒՍ. Մերձեսցին խընդորուածք իմ առաջի քո Տէր, ըստ բանի քում իմաստուն արա զիս. ալելուիա, ալելուիա, ալելուիա:

ANT. Let my cry come before you, O Lord; give me understanding according to your word. Alleluia! Alleluia! Alleluia!

Մըտցեն աղօթք իմ առաջի քո Տէր եւ բանիւ քով փըրկեա զիս. ալելուիա, ալելուիա, ալելուիա:

Let my supplication come before you; deliver me according to your promise. Alleluia! Alleluia! Alleluia!

Բըղխեսցեն զչըրթունք իմ զօրհնութիւնքս քո, յորժամ ուսուցես ինձ զարդարութիւնքս քո. ալելուիա, ալելուիա, ալելուիա:

My lips will pour forth praise, because you teach me your statutes. Alleluia! Alleluia! Alleluia!

Փառք Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սըրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն: Ալելուիա, ալելուիա, ալելուիա:

Glory be to the Father and to the Son and to the Holy Spirit, now and always and forever and ever. Amen. Alleluia! Alleluia! Alleluia!

*Ishkhank haladzétsin zis i nanir, alélooya. yév i panits kots yérgyav sird im; alélooya, alélooya. Tsúndzatsa yés i panús ko, vorbés ayn vor kúdané avar pazoom; alélooya, alélooya. Úzméghs adétsi yév anarkétsi, yév zorénús ko sirétsi; alélooya, alélooya. Mértséstsin khúntúrvadz k im arachi ko Dér, úsd pani koom imasdoon ara zis; alélooya, alélooya, alélooya. Múdtsén aghotk im arachi ko Dér yév paniv kov púrgya zis; alélooya, alélooya, alélooya. Púkhéstsén zshúrtoonk im zorhnootyoonús ko, horzham oosoostsés ints zartarootyoonús ko; alélooya, alélooya, alélooya. Park Hor yév Vortvo yév Hokvooy n Súrpo, ayzhm yév mishd yév havidyans havidé nits. Amén. Alélooya, alélooya, alélooya.*

ՄԲԿ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք, ընկալ, կեցո եւ ողորմեա:

DCN. Again for peace let us beseech the Lord. Receive us, save us, and have mercy upon us.

ՔՀՆ. Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

PRS. Blessing and glory be to the Father and to the Son and to the Holy Spirit, now and always and forever and ever. Amen.

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԲՁ

CANTEMUS, Mode III

Արծաթսիրութեամբ ըն մոլեալ Յուդա, զիւր ըզմեծ ըզվարդապետն ընդ երեսուն արծաթոյ հրէից ըն մատնէր:

Seized by love of money, Judas betrays his great teacher to the Jews for thirty pieces of silver.

Ընդ որում ես համբուրեցից ասէ ըզնա կալարուք. ով համբոյր նենգութեան, նըշան եւ առիթ մահու:

He whom I shall kiss is the one, arrest him. O kiss of betrayal – the sign and cause of death.

Մերկացաւ յինքենէ զաստուածային Սուրբ Հոգին. եւ ըզգեցաւ ըզսատանայ, որպէս զհանդերձ արկաւ զիւրեաւ:

Judas put off from himself the divine Holy Spirit and put on Satan, whom he put on like a garment.

*Ardzatsirootyampûn molyal Hoota, zyoor ûzmedz ûzvartabédn ûnt yérésoun ardzato hûréy-itsûn madnér.*

*Ûnt voroom yés hampoorétsits asé ûzna galarook, ov hampooyr nénkootyan, nûshan yév arit mahoo.*

*Mérgatsav hinkéné zasdvadzayin Soorp Hokin, yév ûzkétsav ûzsadana, vorbés z-hantérts argav zyooroyav.*

ՄԱՂԹԱՆԲ

SUPPLICATION

Փառք հրաշափառ չարչարանաց քո, Տէր, զօրհնեալ եւ զփառաւորեալ, զհրաշալի եւ զյաղթող զչարչարանսն քո սուրբ օրհնեմք եւ փառաւորեմք: Մարդասէր Տէր, վասն սրբուհւոյ անարատի մօր քո եւ կուսի եւ վասն սուրբ խաչի քո պատուականի ընկալ զաղաչանս մեր եւ կեցո զմեզ:

Glory to your venerable passion, O Lord. We bless and glorify your blessed, glorious, wondrous, and victorious holy passion. Lord, lover of mankind, for the sake of your holy, immaculate, and virgin Mother and for the sake of the glorious holy Cross receive our supplications and save us.

ՔՀՆ. *Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս: Ամէն:*

*Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո: Եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի: Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր: Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողու՞մք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէ: Զի քո է արքայութիւնս եւ զօրութիւնս եւ փառք, յաւիտեանս: Ամէն:*

ՔՀՆ. *Լցաք առաւօտու ողորմութեամբ քով, ցնծացաք եւ ուրախ եղաք զամենայն աւուրս կենաց մերոց:*

ՍՐԿ. *Ուրախ եղաք փոխանակ աւուրցն, յորս խոնարհ արարեր զմեզ, եւ ամացն, յորս տեսաք զչարհարանս: Հայեա, Տէր, ի ծառայս քո եւ ի գործս ձեռաց քոց եւ առաջնորդեա որդւոց նոցա, եղիցի լոյս Տեառն Աստուծոյ ի վերայ մեր: Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ, Տէր, եւ զգործս ձեռաց մերոց յաջողեա մեզ:*

ՔՀՆ. *Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:*

ՍՐԿ. *Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն: Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք, ընկալ, կեցո եւ ողորմեա:*

ՔՀՆ. *Օրհնութիւնս եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:*

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԵՐԻՑ ՄԱՆԿԱՆՑ

- *Օրհնեալ ես, Տէր Աստուած Հարցն մերոց, գովեալ եւ փառաւորեալ է անուն քո յաւիտեան:*

- *Յիրաւունս անցուցեր զայս ամենայն ընդ մեզ. արդար ես դու, Տէր, եւ ամենայն գործք քո ճշմարիտ են:*

ՄԱՂԹԱՆՔ

ՔՀՆ. *Օրհնեցէք, ամենայն արարածք, զԱրարիչն արարածոց, զՏէրն տերանց, զԹագաւորն թագաւորաց, զԱստուածն աստուծոց: Օրհնեցէք, գովեցէք, բարբառանցէք, զի քաղցր է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա:*

PRS. Blessed be our Lord Jesus Christ. Amen.

Our Father, who art in heaven. hallowed be Thy name. Thy kingdom come. Thy will be done on earth as it is in heaven. Give us this day our daily bread. And forgive us our trespasses, as we forgive those who trespass against us. And lead us not into temptation, but deliver us from evil. For Thine is the kingdom and the power and the glory, forever. Amen.

PRS. Satisfy us in the morning with your steadfast love, so that we may rejoice and be glad all our days.

DCN. Make us glad for as many days as you have afflicted us, and for as many years as we have seen evil. Let your work be manifest to your servants, and your glorious power to their children. Let the favor of the Lord our God be upon us, and prosper for us the work of our hands— O prosper the work of our hands!

PRS. Glory be to the Father and to the Son and to the Holy Spirit.

DCN. Now and always and forever and ever. Amen. Again for peace let us beseech the Lord. Receive us, save us and have mercy upon us.

